KAPB-ի ամփոփիչ հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել Ծրագրի ավարտին դեռահաս աղջիկների և տղաների՝ ներառյալ հաշմանդամություն ունեցողների, ինչպես նաև համայնքի բնակչության գիտելիքի, վերաբերմունքի, փորձառության և վարքագծի հնարավոր փոփոխությունները՝ համեմատելով ամփոփիչ և ելակետային ուսումնասիրությունների արդյունքները՝ հաշվի առնելով մինչև Ծրագրի մեկնարկը ելակետային իրավիճակը: Ամփոփիչ ուսումնասիրության երկրորդային նպատակն է դեռահասների և երիտասարդների ակտիվ ներգրավմամբ նպաստել կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի կայունության վերաբերյալ համայնքային ռազմավարությունների մշակման համար կրթական ծրագրերի, իրազեկման և հաղորդակցման ռազմավարությունների հետագա բարելավմանը:



Հետազոտությունը վերաբերում է հետևյալ հետազոտական հարցերին.

1. Ելակետային ուսումնասիրության համեմատ, որքան՞վ է փոխվել թիրախային խմբերի գիտելիքը կլիմայի փոփոխության հայեցակարգի և այն գործողությունների մասին, որոնք նրանք կարող են ձեռնարկել՝ շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վրա ազդեցությունը նվազեցնելու համար:
2. Ելակետային և ամփոփիչ հետազոտությունների միջև կա՞ն արդյոք տարբերություններ՝ աշխարհում, Հայաստանում և համայնքների մակարդակում թիրախային խմբերի ընկալմամբ կլիմայի փոփոխության հիմնական խնդիրների վերաբերյալ, և ինչպե՞ս է փոխվել այդ խնդիրների նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը:
3. Որքանո՞վ են փոխվել ամփոփիչ հետազոտությունում կլիմայի փոփոխության վերաբերյալ թիրախային խմբերի համար տեղեկատվության հիմնական աղբյուրները՝ ելակետային հարցման համեմատ:
4. Որքանո՞վ է աճել/նվազել թիրախային խմբերի պատրաստակամությունը՝ ստանալու կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև գիտելիքներ և հատուկ հմտություններ՝

⁴ԿՏԱԿ-ը տվյալների կառավարման պաշտոնական գործակալություն է, որը ՀՀ կառավարության, մասնավորապես ՀՀ ԿԳՄՍՆ որոշման համաձայն հանդիսանում է Հայաստանում կրթության վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության պատասխանատուն:

⁵UNICEF. (2021). UNICEF procedure on ethical standards in research, evaluation, data collection and analysis. Document number: procedure/oor/2021/001.

⁶UNICEF. (2002). Children participating in research, monitoring and evaluation (M&E) — Ethics and your responsibilities as a manager. UNICEF Evaluation Office.

⁷UNICEF. (2020). UNICEF policy on personal data protection. Document number: POLICY/DFAM/2020/001. Effective date: 15 July 2020.

դրա ազդեցությունները կանխելու, կառավարելու կամ նվազեցնելու համար:

- 5. Որքանո՞վ են մեծահասակները/դեռահասները ներկայումս ներգրավված և պատրաստ հետազայում ակտիվորեն ներգրավվել բնապահպանական ծրագրերում և գործողություններում:
- 6. Ելակետային հարցման համեմատ, որքանո՞վ են մեծահասակները/դեռահասները ներկայումս կարգավորում, հարմարեցնում իրենց վարքագիծը՝ կլիմայի փոփոխությունը կանխելու համար, և որքանո՞վ են նրանք պատրաստ գիջումների գնալ և հետազայում հարմարեցնել իրենց վարքագիծը:

Հետազոտությունը չի ներառում կլիմայի փոփոխության վերաբերյալ մանրամասն գիտելիք և նպատակ չունի չափել դպրոցական հատուկ դասընթացների կամ պարտադիր դասերի միջոցով դեռահասներին տրամադրված գիտելիքի մակարդակն ու որակը:

Հետազոտության հիմնավորումը և վերջնական օգտագործողները

Հետազոտության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը թույլ կտա ՅՈՒՆԻՍԵՖ-ին, ԱԶԳ-ին և

գործընկերներին մշտադիտարկել Ծրագրի արդյունքները և հաջողությունները, տեղեկանալ Ծրագրի հետ կապված առաջընթացի և հաջողության գնահատմանը, ինչպես նաև ավելի լայն իրազեկել Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից դեռահասներին և երիտասարդներին ուղղված ծրագրերի վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքները կօգտագործվեն կլիմայի փոփոխության և դեռահասների մասնակցության վերաբերյալ ուսումնական նյութեր, ուսուցողական, տեղեկատվական և կրթական նյութերի բարելավման, ինչպես նաև նմանատիպ այլ նախաձեռնություններում քաղված դասերը հաշվի առնելու համար:

Ակնկալվում է, որ այս զեկույցը և հետազոտության տվյալները կանդրադառնան այնպիսի թեմաների, որոնք հետաքրքրություն են ներկայացնում շահեկից խմբերի և արդյունքների վերջնական օգտագործողների լայն շրջանակի համար, այդ թվում՝ ոլորտային նախարարությունների, մասնավորապես՝ ՇՄՆ, ՏԿԵՆ, ԿԳՄՍՆ, մարզային և համայնքային իշխանությունների, ԱԶԳ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԿ-ի այլ գործակալությունների, ՔՀԿ-երի, դպրոցների և համայնքների ղեկավարության, ուսուցիչների, դեռահասների և նրանց ծնողների/ խնամակալների համար:

2. Մեթոդաբանություն

2.1. Տվյալների հավաքման մեթոդներ

KAPB հետազոտության մոդելը նախատեսված է որպես թիրախային բնակչության ներկայացուցչական ուսումնասիրություն, որի նպատակն է բացահայտել, թե ինչ է հայտնի (գիտելիք), ինչին են հավատում (վերաբերմունք) և ինչ է արվում (վարքագիծ, վարք) որոշակի հարցի վերաբերյալ: Տեղեկատվությունը հավաքագրվում է կիսաձևայնացված կամ (ավելի հաճախ) ձևայնացված հարցաթերթերի միջոցով, որոնք լրացվում են ինքնուրույն հարցվողների կողմից կամ հարցազուցավարների միջոցով: Կարող են հավաքագրվել և՛ որակական, և՛ քանակական տվյալներ⁸: KAPB հետազոտությունները կարող են բացահայտել գիտելիքի բացերը, մշակութային համոզմունքները կամ վարքագծային օրինաչափությունները, որոնք նպաստում են պատկերացումների ու գործողությունների ձևավորմանը, ինչպես նաև առաջացնում են խնդիրներ կամ խոչընդոտներ զարգացմանն ուղղված ջանքերի համար⁹:

Օգտագործվել է գծային «առաջ-հետո» համեմատությամբ և ոչ գիտափորձային մոտեցմամբ KAPB մեթոդաբանությունը՝ կիրառելով համակցված մեթոդներ: Այս մոտեցումը կարող է բացթողումներ ունենալ ծրագրի ազդեցության համապարփակ ըմբռնման հարցում, սակայն արդյունավետորեն արտացոլում է չափելի փոփոխականների քանակական փոփոխությունները՝ ծրագրի ցուցանիշների մակարդակում և թույլ է տալիս դուրս բերել քաղված դասերը:

Ամփոփիչ հետազոտության մեթոդաբանությունը մշակվել է այնպես, որ կրկնի ելակետային ուսումնասիրությունում օգտագործված ընթացակարգերն ու ընտրանքը, և ընդգրկի նույն թիրախային համախմբությունը՝ ելակետային 48 համայնքներից 33-ում: Ուսումնասիրությունը համալրվել է որակական բաղադրիչով, որի նպատակն է առավել խորքային տեղեկատվություն ստանալ անմիջական շահառուներից ու դասեր քաղել դեռահասների և երիտասարդության մասնակցության և ակտիվիզմի վերաբերյալ:

Կիրառվել են համակցված հետազոտական մեթոդներ՝ հետևյալ թիրախային խմբերի հետ.

1. Համակարգչային օժանդակությամբ վեբ հարցազուցներ (CAWI) 12-17 տարեկան դեռահասների հետ՝ Հայաստանի 33 թիրախային համայնքներում: Օգտագործվել են առցանց ձևայնացված ինքնուրույն լրացվող հարցաթերթեր:
2. Համակարգչային օժանդակությամբ անհատական հարցազուցներ (CAPI), Հայաստանի 33 ծրագրային համայնքներում՝ 18-ից բարձր տարիքի մեծահասակ հարցվողների հետ, ձևայնացված հարցաթերթերով, դեմ առ դեմ սկզբունքով:
3. Ֆոկուս խմբային քննարկումներ (ՖԽՔ, դեմ առ դեմ և հեռավար) ծրագրային դպրոցների՝ 1) 16-18 տարեկան աշակերտների, 2) դպրոցի ղեկավարության/տնօրենների, 3) դպրոցի ուսուցիչների, 4) համայնքի ղեկավարների հետ:

Սկզբնապես, ելակետային հետազոտության հարցաթերթերը մշակվել են Բրեվիս-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից՝ հիմնվելով ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԿ-ի այլ գործակալությունների՝ նախկինում նմանատիպ առաջադրանքների համար գոյություն ունեցող գործիքների և տարիքային առանձնահատկությունները հաշվի առնող ուղեցույցների վրա: Այնուհետև, Մեդիա Մոդել-ի մասնագետների կողմից այս գործիքները հարմարեցվել են ամփոփիչ ուսումնասիրության պահանջներին, վերանայվել են էթիկական փորձաքննող անկախ հանձնաժողովի կողմից և փորձարկվել՝ երեխաներին հարմար լեզու և երեխաներից տվյալներ հավաքելու էթիկական չափանիշներն ապահովելու համար:

Երկու հարցաթերթերն էլ ձևայնացված են և հիմնականում ներառում են փակ հարցեր: Հարցաթերթի լրացումը տևում է մինչև 15 րոպե (տե՛ս Հավելվածներ 2 և 3):

Հարցաթերթերն ունեն հինգ թեմատիկ բլոկներ՝ չափելու համար հետևյալը. (ա) երիտասարդների և դեռահասների հիմնախնդիրները¹⁰, (բ) գիտելիքը, (գ) վերաբերմունքը կլիմայի փոփոխության նկատմամբ, (դ) հարցվողների՝ շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վերաբերյալ փորձառությունն ու (ե) վարքագիծը:

⁸Տե՛ս Jacobsen, K. H. (2016). Introduction to health research methods. Jones & Bartlett Publishers.

⁹Տե՛ս Alhaj, S. (2018). KAP surveys: How to develop knowledge, attitude and practice survey. Cited in Knowledge, Attitudes, Practice, and Behaviour (KAPB) Study Baseline Study on Climate Change and Adolescent Participation in Armenia, UNICEF, Yerevan, 2022.

¹⁰Հարցերի նոր բլոկ, որը մշակվել է հատուկ ամփոփիչ հետազոտության համար:

ՖԻՔ-երն անցկացվել են վերապատրաստված և փորձառու մոդերատորների կողմից՝ օգտագործելով նախապես փորձարկված ուղեցույցներ: Յուրաքանչյուր ՖԻՔ տևել է մոտավորապես 1,5-2 ժամ¹¹:

2.2. Ընտրանք

ԿԱՐԲ-ի ամփոփիչ հետազոտությունը կրկնում է ելակետային հետազոտության ընտրանքի կառուցվածքն ու ընթացակարգերը՝ համեմատելի ընտրանքներ կազմելու և նույն գլխավոր համախմբությունն ընդգրկելու համար: Ելակետային ընտրանքում ներառված էին 48 համայնքներ, որոնք ի սկզբանե նախատեսված էին Ծրագրի իրականացման համար: Հաշվի առնելով տարբեր ծրագրային նպատակներն ու համատեքստի փոփոխությունները՝ Ծրագրի թիմը, ՅՈՒՆԻՍԵՖ-ը և ԱԶԳ-ը որոշում են կայացրել վերանայել Ծրագրում ընդգրկվելիք խոշորացված համայնքների ցանկը: Արդյունքում, Ծրագրի համար ընտրվել է ընդհանուր առմամբ 33 համայնք, այդ թվում՝ 28-ը՝ 48 ելակետային խոշորացված համայնքներից, և 5 համայնք, որոնք ներառված չէին ելակետային ուսումնասիրությունում:

Համեմատելի ընտրանք ստանալու համար համադրվել են Ծրագրի ելակետային և փաստացի ծրագրային խոշորացված համայնքները: Այս մոտեցումը թույլ է տվել ելակետային տվյալներից ներառել նույն 28 համայնքներն ամփոփիչ ուսումնասիրությունում, ինչպես նաև առանձնացել համադրելի համայնքներ Ծրագրի 5 համայնքների համար, որոնք ի սկզբանե ընդգրկված չէին ելակետային ընտրանքում: Այս 5 լրացուցիչ համայնքների համար իրականացվել է հիմնական ժողովրդագրական բնութագրերի տրամաբանական համեմատություն 15 հիմնական համայնքների հետ: Հետևաբար, ամփոփիչ ուսումնասիրության ընտրանքը կրկնել է 28 համադրելի համայնքների հիմնական ընտրանքը և ներառել 5 համադրելի նոր համայնքներ (տե՛ս Աղյուսակ 38, Հավելված 1): Ձևավորվել է տվյալների կշռման մոտեցում¹²՝ մարզային մակարդակում ելակետային և ամփոփիչ հետազոտությունների ընտրանքների համադրելիությունն ապահովելու համար: Սակայն, քանի որ կշռված և չկշռված ցուցանիշների միջև տարբերությունները նվազագույն էին, իսկ ընտրանքներն ի սկզբանե ներկայացուցչական, տվյալների կշռման անհրաժեշտություն չի եղել¹³:

2.2.1. Դեռահասների շրջանում CAWI հետազոտության ընտրանքը

Ելակետային CAWI-ն իրականացվել է պարզ հավանականային ընտրանքի միջոցով՝ ԿՏԱԿ-ի ցուցակից պատահականորեն ընտրված այն աշակերտների հետ, որոնք սովորում են Հայաստանի՝ Ծրագրի համար ի սկզբանե նախատեսված խոշորացված համայնքներում գտնվող դպրոցների 6-12-րդ դասարաններում: Ամփոփիչ հետազոտության ընտրանքի համար Ծրագրային համայնքները և դպրոցները համադրվել են ելակետային ընտրանքում ընդգրկվածների հետ՝ համեմատելի ընտրանք ձևավորելու համար:

Ընտրանքներն ազգային մակարդակով ներկայացուցչական չեն, քանի որ դրանք չեն ընդգրկում Հայաստանի որոշ մարզեր ու մայրաքաղաք Երևանը:

Ինչպես ելակետային, այնպես էլ ամփոփիչ հետազոտության համար օգտագործվել է բազմաստիճան շերտավորված հավանականային ընտրանք: Ամփոփիչ ուսումնասիրության համար 33 խոշորացված համայնքներում գործող դպրոցներից ընտրվել է 310 հանրակրթական դպրոց՝ հաշվի առնելով բաշխվածությունն ըստ դասարանների (6-ից 12-րդ), բնակավայրի տեսակի (գյուղական/քաղաքային) և սեռի: Բաշխումների հիման վրա ընտրանքի չափանիշներին համապատասխան ձևավորվել է 246 դպրոցներից բաղկացած ընտրանք՝ թիրախային համայնքներում գործող բոլոր դպրոցների համախմբությունից: ԿՏԱԿ-ն պատահականության սկզբունքով ընտրել է սահմանած չափանիշներին համապատասխանող 1516 աշակերտներ՝ օգտագործելով Հայաստանի Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) նույնականացման կոդերը (ընտրանքի բաշխումը տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակ 36-ում): Ելակետային և ամփոփիչ ուսումնասիրություններում ապահովվել է ընտրանքի $\pm 2,48\%$ սահմանային սխալի մեծություն 95% վստահության միջակայքում:

Արդյունքում, ամփոփիչ հետազոտության համար մարզերի բաշխումը համապատասխանում է ելակետային հետազոտության ընտրանքին (տե՛ս Աղյուսակ 1): Բաշխումն ըստ համայնքների ներկայացված է Հավելված 1-ի Աղյուսակ 9-ում:

¹¹Հետազոտության մեթոդաբանության վերաբերյալ մանրամասները հասանելի են Հետազոտության Ընթացակարգում, որը մշակվել է Մեդիա Մոդելի կողմից 2023 թվականի դեկտեմբերին (հասանելի է ըստ պահանջի):

¹²Տվյալների կշռման վերաբերյալ մանրամասները տե՛ս Հետազոտության ընթացակարգում:

¹³Մանրամասները տե՛ս Ուսումնասիրության սահմանափակումները բաժնում:

Աղյուսակ 1. CAWI ընտրանքի բաշխումն ըստ մարզերի

Մարզեր	Քանակ	Տոկոս
Գեղարքունիք	151	10.0%
Լոռի	317	20.9%
Շիրակ	287	18.9%
Սյունիք	354	23.4%
Վայոց Ձոր	132	8.7%
Տավուշ	275	18.1%
Ընդամենը	1516	100%

Չնայած նրան, որ հարցվողները պատահականորեն են ընտրվել, կիրառվել են քվոտաներ՝ ապահովելու համար, որ աշակերտների բաշխումն ըստ ժողովրդագրական խմբերի (տարիք, սեռ, տարածաշրջան, բնակավայրի տեսակ) մոտ լինի փաստացի և ելակետային ընտրանքների բաշխմանը (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Դեռահասների սոցիալ-ժողովրդագրական բաշխումը ելակետային և ամփոփիչ ընտրանքներում (n=1516)

Տարանջատման հիմք	Մասնաբաժինն ընտրանքում (Ելակետային)	Մասնաբաժինն ընտրանքում (Ամփոփիչ)	Մասնաբաժինն գլխավոր համախմբությունում
Սեռ			
Արական	51.6%	51.1%	51.0%
Իգական	48.4%	48.9%	49.0%
Ընդամենը	100%	100%	100%
Դասարան			
6-րդ դասարան	18.3%	18.3%	17.9%
7-րդ դասարան	16.8%	16.8%	16.9%
8-րդ դասարան	16.3%	16.3%	16.2%
9-րդ դասարան	15.4%	15.4%	15.5%
10-րդ դասարան	10.8%	10.8%	11.0%
11-րդ դասարան	11.3%	11.3%	11.0%
12-րդ դասարան	11.2%	11.2%	11.6%
Ընդամենը	100%	100%	100%
Բնակավայրի Տեսակ			
Գյուղական	56.7%	53.4%	55.6%
Քաղաքային	43.3%	46.6%	44.4%
Ընդամենը	100%	100%	100%
ԿԱՊԿՈՒ			
ԿԱՊԿՈՒ աշակերտներ	3%	2.6%	3.2%
Ընդամենը	100%	100%	100%

Հատուկ քվոտա է կիրառվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դեռահասների (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) համար: Ամփոփիչ հետազոտության ընտրանքում ԿԱՊԿՈՒ դեռահասների թիվը 40 է (ընտրանքի 2,6%-ը): Այնուամենայնիվ, այս խմբի վերաբերյալ տվյալները ներկայացուցչական չեն և պետք է մեկնաբանվեն որպես մոտարկված պատկեր:

Ամփոփիչ ուսումնասիրության համար հիմնական դաշտային աշխատանքներն ամբողջականացվել են ԿՏԱԿ-ի կողմից 17 օրվա ընթացքում՝ 2024 թվականի մարտի 5-ից 22-ը: Անվավեր հարցաթերթերը փոխարինելու համար պահանջվել է ևս 25 օր: ԿՏԱԿ-ի

կողմից Մեդիա Մոդելին և ՅՈՒՆԻՍԵՖ-ին ներկայացված ամբողջական ընտրանքային միավորները (ԸՄ) և վերջնական տվյալների բազան ամբողջովին ապահանջավորվել են և չեն պարունակում դեռահասների անձը բացահայտող տվյալներ:

Հետազոտության որակի վերահսկման համար ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.

- հարցազրույցների որակի ստուգում տվյալների
- հավաքման համակարգողների կողմից (զուգայցերի) - 24,8%,

- հարցաթերթերի տեխնիկական մշտադիտարկում (համակարգչային ստուգում) - 100%,
- հարցաթերթերի տրամաբանական ստուգում - 100%

Համաձայնության ձեռք բերման վերաբերյալ տեղեկացնող նամակները ԿՏԱԿ-ը ԿԳՄՍՆ-ի միջոցով ուղարկել է դպրոցներին՝ նկարագրելով հետազոտության նպատակները, ակնկալիքները, իրականացնողներին և դոնորներին, ժամկետները, ինչպես նաև տալով հստակ հրահանգներ աշակերտների մասնակցության ու անկախության վերաբերյալ: Ջանքեր են գործադրվել հարցման ընթացքում նրանց գաղտնիությունը և մասնակցության կամավոր բնույթը ապահովելու համար՝ մինևույն ժամանակ չսահմանափակելով դպրոցների հնարավորությունը որոշելու, թե օրվա, որ ժամերին է ավելի հարմար տրամադրել դպրոցական համակարգիչներին ու համացանցին հասանելիություն՝ առցանց հարցում անցկացնելու համար:

2.2.2. Չափահասների շրջանում CAPI հետազոտության ընտրանքը

Ամփոփիչ հետազոտության ընտրանքն ընդգրկում է 18 և բարձր տարիքի չափահաս բնակչությունը՝ Հայաստանի 6 մարզերի 33 խոշորացված ծրագրային համայնքներում: Ինչպես ելակետային, այնպես էլ ամփոփիչ հետազոտությունների համար ընտրանքի ծավալը կազմում է մոտ 700 տնային տնտեսություն (SS), ինչն ամբողջ ընտրանքի համար ապահովում է 95% վստահության միջակայքում $\pm 2,48\%$ սահմանային սխալ:

Այս ընտրանքն ազգային մակարդակով ներկայացուցչական չէ և չի ընդգրկում Հայաստանի որոշ մարզերն ու մայրաքաղաք Երևանը:

Ելակետային հետազոտությունում բնակավայրերի, SS-ների և հարցվողների ընտրության համար օգտագործվել է բազմաստիճան շերտավորված հավանականային ընտրանք՝ պատահական ընտրության սկզբունքով: Ամփոփիչ հետազոտությունում ընտրանքի բաշխումների համար կիրառվել են նույն ընթացակարգերը: Այսպիսով, ամփոփիչ հետազոտության ընտրանքը ներառում է 33 խոշորացված համայնքներ՝ ներառյալ ծրագրում ընդգրկված 463 քաղաքային և գյուղական բնակավայրերը, որոնց ընտրանքի ծավալը հաշվարկված է չափահաս բնակչության համար՝ ելակետային ուսումնասիրության ընտրանքի սոցիալ-ժողովրդագրական բաշխումներին համապատասխան (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Չափահասների սոցիալ-ժողովրդագրական բաշխումն ամփոփիչ ուսումնասիրության ընտրանքում (n=703)

Տարանջատման հիմք	Խմբեր	Քանակ	Տոկոս
Սեռ	Արական	199	28.3%
	Իգական	504	71.7%
Ընդամենը		703	100%
Տարիք	18-30	105	14.9%
	31-45	227	32.3%
	46-60	148	21.1%
	61+	223	31.7%
Ընդամենը		703	100%
Բնակավայրի տեսակ	Քաղաքային	334	47.5%
	Գյուղական	369	52.5%
Ընդամենը		703	100%
Կրթական մակարդակ	Միջնակարգ կամ ցածր	12	1.6%
	Միջին մասնագիտական	289	41.2%
	Բարձրագույն	402	57.3%
Ընդամենը		703	100%

Ամփոփիչ հետազոտության դաշտային աշխատանքներն ավարտվել են 41 օրվա ընթացքում՝ 2024 թվականի փետրվարի 29-ից ապրիլի 10-ը: Ընդհանուր առմամբ, տվյալների հավաքագրմանը մասնակցել են 17 վերապատրաստված հարցազրուցավարներ: 703 հարցում անցկացնելու համար հարցազրուցավարներն այցելել են ընդհանուր առմամբ 2395 SS, որոնցից 599 SS հրաժարվել են մասնակցել հարցմանը:

Հետազոտության որակի վերահսկման համար ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.

- հարցազրուցավարների վերահսկում տվյալների հավաքման կոորդինատորների կողմից - 35%
- գեոլոկացիայի ստուգում գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) կոորդինատների միջոցով - 100%
- հեռախոսազանգերով ստուգում - 17%
- հարցաթերթերի տրամաբանական ստուգում - 100%:

2.2.3. ՖԻՔ-ների ընտրանքը

Ընդհանուր առմամբ, անցկացվել է 15 ՖԻՔ դեռահասների, երիտասարդների և այլ շահագրգիռ կողմերի հետ .

- 1 ՖԽՔ դպրոցի ղեկավար անձնակազմի / տնօրենների հետ,
- 1 ՖԽՔ համայնքային իշխանությունների ներկայացուցիչների հետ
- 3 ՖԽՔ ծրագրային դպրոցների ուսուցիչների հետ

Դպրոցի ղեկավարության և համայնքային իշխանությունների հետ ՖԽՔ-երը հավաքագրվել են 18 համայնքների ծրագրային դպրոցների ցանկից¹⁴, որոնք իրականացրել են կլիմայի փոփոխության տեղական համայնքային նախագծեր՝ տեղական ինքնակառավարման մարմինների անմիջական մասնակցությամբ:

Ուսուցիչների հետ ՖԽՔ-ն հավաքագրվել է այն ուսուցիչների ցանկից, ովքեր մասնակցել են Ծրագրի մրցույթներին և/կամ պարզապես իրենց նախագծային ուսուցման ծրագրերը դպրոցներում իրականացնելու համար: Ծրագրային 6 մարզերից ընտրվել է առնվազն մեկական ուսուցիչ:

Ծրագրի շրջանակներում ընդգրկված 6 մարզերում իրականացվել է 10 ՖԽՔ՝ 16-18 տարեկան դեռահասների և երիտասարդների հետ, ովքեր մասնակցել են Ծրագրի միջոցառումներին՝ 2022 թվականի ընթացքում:

Յուրաքանչյուր ՖԽՔ ներառում է 6-8 մասնակից՝ հնարավորինս պահպանելով սեռի և տարիքի համամասնությունը: Դպրոցականների հետ 10 ՖԽՔ-ներից 7-ն անցկացվել են ակտիվորեն ներգրավված աշակերտների հետ, ովքեր անմիջականորեն մասնակցել են Ծրագրի միջոցառումներին, մրցույթներին, բնապահպանական նախաձեռնություններին և այլն: Եվս 3 ՖԽՔ անցկացվել է այն աշակերտների հետ, ովքեր հաճախել են կլիմայի փոփոխության վերաբերյալ դպրոցական պարտադիր դասերին, սակայն չեն մասնակցել Ծրագրի բուն միջոցառումներին: ՖԽՔ մասնակիցների բաշխումն ըստ սեռի ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Կողմնակալ ընտրությունից խուսափելու համար ՖԽՔ մասնակիցները ընտրվել են պատահականության սկզբունքով՝ հավաքագրման ցուցակներից: Դպրոցի տնօրինությունը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը չեն մասնակցել բուն ընտրությանը: Բոլոր մասնակիցները հավաքագրվել են իրենց կամավոր և տեղեկացված համաձայնության (ՏՀ) հիման վրա՝ օգտագործելով գրավոր տեղեկացված համաձայնության և զտիչ հարցաթերթերի ձևաթղթերը:

Աղյուսակ 4. ՖԽՔ մասնակիցների բաշխումն ըստ սեռի

Մարզեր	Ընդամենը	Իգական	Արական
10 ՖԽՔ 16-18տ աշակերտների հետ	88	66	22
1 ՖԽՔ համայնքային իշխանությունների հետ	7	4	3
1 ՖԽՔ դպրոցի ղեկավար անձնակազմի/ տնօրենների հետ	6	4	2
3 ՖԽՔ դպրոցի ուսուցիչների հետ	18	17	1
ԸՆԴԱՄԵՆԸ	119	91	28

2.3. Տվյալների տարանջատումը

Տվյալները ներկայացված են Աղյուսակներում և Գծապատկերներում՝ համեմատելով ելակետային և ամփոփիչ հետազոտությունների արդյունքները: Արդյունքներն, անհրաժեշտության դեպքում, տարանջատված են ըստ տարիքի, դասարանի, սեռի, բնակավայրի տեսակի: Տվյալների տարանջատման հիմքը ներկայացված է Հավելված 1-ի Աղյուսակ 36-ում և Աղյուսակ 37-ում: Pearson-ի X²-թեստն օգտագործվել է որոշելու համար, թե արդյոք կան էական տարբերություններ փաստացի և կանխատեսվող հաճախականությունների միջև:

2.4. Էթիկական նկատառումներ

Հետազոտությունն իրականացվել է ներառականության, գենդերազգայուն և երեխայակենտրոն մոտեցումների հիման վրա: Սկսած նախապատրաստական փուլից ընդհուպ մինչև վերջնական զեկույցի պատրաստում՝ ուշադրություն է դարձվել խոցելի և մարգինալացված խմբերի կարծիքներին, ինչպես նաև գենդերային հավասարության, իրավահավասարության և մարդու իրավունքների նկատառումներին:

Բոլոր հարցազրուցավարները վերապատրաստվել են՝ չուղղորդել հարցվողների պատասխանները և հարգանք ցուցաբերել՝ անկախ հնչած տեսակետների հանդեպ իրենց անձնական վերաբերմունքից: Մասնակցության համաձայնությունը տրվել է մինչև հարցումը սկսելը, ապահովվել է կամավոր մասնակցություն՝ բացառելով որևէ հետևանքներ մերժումների դեպքում:

Պահպանվել են անձնական տվյալների անանունությունն ու գաղտնիությունը, ինչպես նաև ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ «Հետազոտության, գնահատման, տվյալների

¹⁴Ուսուցիչների ցանկը Մեդիա Մոդել-ին տրամադրվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից՝ համաձայն Տեղեկատվության չհրապարակման մասին համաձայնագրի (ՏՀՄՀ) և Տվյալների չտարածման համաձայնագրի՝ ծածկագրված ֆայլով:

հավաքման և վերլուծության էթիկական չափանիշների ընթացակարգի¹⁵», «Հետազոտական քաղաքականության» և «Հետազոտությանը, մշտադիտարկմանը և գնահատմանը երեխաներին ներգրավելու վերաբերյալ տեխնիկական արձանագրության»¹⁶ սահմանված էթիկական սկզբունքները¹⁷:

Թեև երեխաների ներգրավումը դաշտային աշխատանքներում իրականացվել է հեռավար եղանակով՝ առանց երեխաների հետ անմիջական շփման, կիրառվել են ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ԿՏԱԿ-ի երեխայի պաշտպանության ընթացակարգերը: Մեթոդաբանությունն ու գործիքները ենթարկվել են էթիկական փորձաքննող անկախ հանձնաժողովի գննությանը¹⁸: «Մի՛ վնասիր», հարգանքի, խոսքի ազատության, երեխայի լավագույն շահի, կամավոր մասնակցության, գաղտնիության և անանունության, տվյալների պաշտպանության սկզբունքները եղել են ուղենշային էին սույն հետազոտության տվյալների հավաքագրման և հաշվետվությունների պատրաստման ողջ ընթացքում:

2.5. Հետազոտության սահմանափակումները

Հայտնաբերվել են հետազոտության հետևյալ սահմանափակումները, և իրականացնող թիմերի կողմից ձեռնարկվել են մեղմացնող հետևյալ միջոցառումները.

- **Պարզեցված «առաջ-հետո» համեմատություն.** ոչ գիտափորձային մեթոդաբանությունը չի չափում ծրագրի ազդեցությունը՝ թույլ տալով արձանագրել միայն ծրագրային ցուցանիշներին անշվող չափելի փոփոխականներում թվային փոփոխությունները:
- **Ընտրանքների սահմանափակ համադրելություն՝ ծրագրի ծածկույթի փոփոխության կամ ոչ նույնական ընտրանքային միավորների պատճառով.** ընտրանքները կազմված չեն առաջնային միավորների միևնույն շարքից, և ելակետայինի ու ամփոփիչ ընտրանքների միջև կան տարբերություններ՝ գյուղական և քաղաքային համայնքների բաշխման տեսանկյունից: Այնուամենայնիվ, չկառված տվյալների օգտագործումը արդարացված է նվազագույն տարբերության և ընտրանքների ներկայացուցչական լինելու հանգամանքով¹⁹:

- **Դեռահասների կարողությունը առցանց հարցում լրացնելու և սարքավորումների ու համացանցի հասանելիությունը.** CAWI-ն կազմակերպվել է դպրոցների միջոցով ԿՏԱԿ-ի կողմից՝ ապահովելով համացանցի և սարքավորումների հասանելիությունն ու տեխնիկական աջակցություն: Սակայն որակի լրացուցիչ հսկողության և դեռահասների տվյալների հավաքագրման վերահսկողության ընթացքում հայտնաբերել են ամբողջական գաղտնիության խախտման դեպքեր: Այս բոլոր հարցաթերթերը փոխարինվել են:

- **Արտակարգ իրավիճակ և ռազմական էսկալացիա Հայաստանի սահմաններին ելակետային հետազոտությունից հետո.** Տեղի է ունեցել բնակչության ընդհանուր առաջնահերթությունների փոփոխություն՝ հանգեցնելով որոշ չափումների համատեքստի փոփոխության, ինչպիսին է կլիմայի փոփոխության կարևորության գնահատումը՝ համեմատած այլ խնդիրների հետ, օրինակ՝ անվտանգության:

- **«Առաստաղի էֆեկտ».** քանի որ ծրագրի մեկնարկին հիմնական ցուցանիշների արժեքները արդեն իսկ բարձր էին, ակնկալվող փոփոխությունները ծրագրի ավարտին կարող էին նշանակալի չլինել: Երբ նախնական չափումներն արդեն մոտ են առավելագույն նպատակային արժեքին, բարելավման հնարավորությունները սահմանափակ են, ինչը դժվարացնում է էական փոփոխությունների հայտնաբերումը²⁰:

- **Հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաների ներգրավումը.** CAPI-ի հարցազրուցավարները հատուկ հրահանգավորվել են դուրս չթողնել հաշմանդամություն ունեցող անձանց, եթե նրանք ընտրվել են պատահականության սկզբունքով, և, եթե չկան լուրջ խոչընդոտներ հարցազրույցներն իրականացնելու համար: Օգտագործվել է CAWI-ին մասնակցելու համար ԿԱՊԿՈւ երեխաների ընտրության քվոտան: Այնուամենայնիվ, այս խմբերում հարցվողների թիվը վիճակագրորեն նշանակալի չէ:

¹⁵UNICEF procedure on ethical standards in research, evaluation, data collection and analysis (2021) document number: procedure/oor/2021/001

¹⁶Children Participating in Research, Monitoring And Evaluation (M&E) — Ethics and Your Responsibilities as a Manager. UNICEF Evaluation Office April 2002

¹⁷UNICEF. (2020). UNICEF policy on personal data protection. Document number: POLICY/DFAM/2020/001. Effective date: 15 July 2020.

¹⁸Հաստատումը ստացվել է 2024 թվականի հունվարի 09-ին՝ ԱՄՆ-ում գործող HML ինստիտուցիոնալ էթիկական փորձաքննող հանձնաժողովից (Review #827ARME23):

¹⁹Groves, R. M., Fowler, F. J., Couper, M. P., Lepkowski, J. M., Singer, E., & Tourangeau, R. (2009). Survey Methodology. Wiley; Kish, L. (1992). Weighting for unequal Pi. Journal of Official Statistics, 8(2), 183-200; Pfeffermann, D. (1993). The role of sampling weights when modeling survey data. International Statistical Review, 61(2), 317-337, etc.


²⁰Stu Streiner, D. L., & Norman, G. R. (2008). Health Measurement Scales: A Practical Guide to Their Development and Use. Oxford University Press; Cohen, J. (1988). Statistical Power Analysis for the Behavioral Sciences (2nd ed.). Lawrence Erlbaum Associates, etc.

3. Հիմնական արդյունքներ. Հարցումներ


3.1. Հարցվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը

CAWI հարցաթերթերը լրացվել են դեռահասների հետևյալ խմբերի կողմից. 51,1%-ը արական սեռի, իսկ 48,9%-ը՝ իգական սեռի հարցվողներ էին: Դեռահաս հարցվողների 56,7%-ը գյուղական, իսկ 43,3%-ը՝ քաղաքային բնակավայրերից էին: Դեռահասների բաշխումն ըստ մարզերի ներկայացված է Գծապատկեր 1-ում: Դեռահաս հարցվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Գծապատկեր 1. Դեռահաս հարցվողների բաշխումն ըստ մարզերի (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2024).



Գծապատկեր 2. Մեծահասակ հարցվողների բաշխումն ըստ մարզերի (n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2024).



Մեծահասակ հարցվողների բաշխումն ըստ տարիքի, սեռի և բնակավայրի տեսակի ներկայացված է Աղյուսակ 6-ում և Գծապատկերներ 2-4-ում: Մեծահասակ հարցվողների 52,5%-ն ապրում է գյուղական, իսկ 47,5%-ը՝ քաղաքային բնակավայրերում: Հարցվողների 28,3%-ը արական, իսկ 71,7% - ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ են:


Աղյուսակ 5. Դեռահաս հարցվողների բաշխումն ըստ տարիքի, սեռի, բնակավայրի տեսակի և ԿԱՊԿՈՒ-ի (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2024).

Տարանջատման հիմքը	Խմբեր	Քանակ	Տոկոս
Սեռ	Արական	782	51.6%
	Իգական	734	48.4%
Դասարան	6	277	18.3%
	7	254	16.8%
	8	247	16.3%
	9	233	15.4%
	10	163	10.8%
	11	172	11.3%
Տարիք	12	170	11.2%
	11-12	373	24.6%
	13-14	487	32.1%
	15-16	387	25.5%
Բնակավայրի տեսակ	17-18	269	17.7%
	Քաղաքային	657	43.3%
	Գյուղական	859	56.7%
Հատուկ չափանիշ	ԿԱՊԿ չունեցող դեռահասներ	1476	97.4%
	ԿԱՊԿՈՒ դեռահասներ	40	2.6%


Աղյուսակ 6. Մեծահասակ հարցվողների բաշխումն ըստ տարիքի և սեռի (n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2024).

Տարիք	Արական	Իգական	Ընդամենը
18-30	25	80	105
31-45	64	163	227
46-60	47	101	148
61+	63	160	223
Ընդամենը	199	504	703

Գծապատկեր 3. Մեծահասակ հարցվողներն՝ ըստ կրթամակարդակի: Բաշխումն ըստ բնակավայրի տեսակի (n=702). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2024)



Գծապատկեր 4. Մեծահասակ հարցվողների զբաղվածության խմբերը: Բաշխումն ըստ բնակավայրի տեսակի (n=240). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2024)



3.2. Գիտելիք


Գրեթե բոլոր դեռահաս հարցվողները (96,2%) նախքան ծրագիրը լսել էին «կլիմայի փոփոխություն» եզրույթը: Ծրագրի ավարտից հետո այս ցուցանիշը չի փոխվել. գրեթե բոլոր դեռահաս հարցվողները (96%) նշել են, որ իրենք ծանոթ են «կլիմայի փոփոխություն» տերմինին (տե՛ս Գծապատկեր 5): Նույն գծապատկերը ցույց է տալիս, որ ԿԱՊԿՈՒ դեռահասների մեծ մասնաբաժինը երբեք չեն լսել այս եզրույթը՝ համեմատած այլ խմբերի հարցվողների հետ: Ելակետային և ամփոփիչ հետազոտությունների միջև էական տարբերություն չի նկատվել: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ այս կոնկրետ խմբի ընտրանքը ներկայացուցչական չէ: Ժողովրդագրական տարբեր խմբերի հարցվողների

Հետազոտական հարց 1.

Ելակետային ուսումնասիրության համեմատ որքանո՞վ է փոխվել թիրախային խմբերի գիտելիքը կլիմայի փոփոխության հայեցակարգի և այն գործողությունների մասին, որոնք նրանք կարող են ձեռնարկել շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վրա ազդեցությունը նվազեցնելու համար:

միջև այս եզրույթին ծանոթ լինելու առումով վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն բացահայտվել:

Գծապատկեր 5. Երբևէ լսե՞լ ես «կլիմայի փոփոխություն» բառակապակցությունը (n=1,516).
CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024)



Համաձայն Գծապատկեր 6-ի՝ մեծահասակների 79.8%-ը լսել է «կլիմայի փոփոխություն» եզրույթը նախքան ծրագիրը, որը թեև բարձր է, բայց ավելի ցածր է, քան դեռահասների իրազեկվածությունը: Այս ցուցանիշն ամփոփիչ հետազոտությունում մնացել է համեմատաբար կայուն: Տվյալները նաև ընդգծում են կրթության մակարդակի և կլիմայի փոփոխության մասին իրազեկվածության մեջ զգալի կոռելյացիան. որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան մեծ է մեծահասակների այն մասնաբաժինը, որը լսել է կլիմայի փոփոխության մասին: Բացի այդ, քաղաքային բնակավայրերի մեծահասակների ավելի մեծ մասն է


իրազեկ եզրույթի մասին՝ գյուղական բնակավայրերի համեմատ: Այնուամենայնիվ, մեծահասակների սեռի և տարիքային խմբերի միջև էական կոռելյացիա չի հայտնաբերվել: Համեմատելով ելակետային և ամփոփիչ հետազոտությունները, ընդհանուր առմամբ, էական փոփոխություններ չեն նկատվել: Հատկանշական է, որ 18-30 տարեկան երիտասարդ հարցվողների շրջանում գրանցվել է ամենազգալի՝ մոտ 9 տոկոսային կետով աճը. ամփոփիչ հետազոտության ժամանակ նրանց 88.6% են հայտնել են, որ լսել են կլիմայի փոփոխություն եզրույթը՝ ելակետայինի 79.7% համեմատ:

Գծապատկեր 6. Երբևէ լսե՞լ եք «կլիմայի փոփոխություն» տերմինը (n=710; n=703).
CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024)




Նմանատիպ դինամիկա է նկատվել նաև «Դուք երբևէ լսե՞լ եք, որ Երկիր մոլորակի կլիման կամ դրա եղանակային պայմանները փոփոխվում են» հարցի պատասխաններում: Ինչպես ցույց է տրված Գծապատկերներ 8-ում և 9-ում, Ելակետային հետազոտության ընթացքում «Այո» են պատասխանել դեռահաս հարցվողների 94.1%, իսկ մեծահասակ հարցվողների 90.1%, մինչդեռ ամփոփիչ հետազոտությունում՝ դեռահասների 94.3%, իսկ մեծահասակների 90.6%: Թեև ժողովրդագրական խմբերի միջև այս հարցերի պատասխաններում էական տարբերություններ չկան, ավելի երիտասարդ աշակերտները (11-12 տարեկան) ավելի քիչ են տեղյակ Երկրի կլիմայի փոփոխության կամ դրա եղանակային պայմանների մասին:


Գծապատկեր 7. Ըստ Ձեզ՝ Դուք հասկանո՞ւմ եք, թե ի՞նչ է նշանակում «կլիմայի փոփոխություն» տերմինը: («Այո, լիովին հասկանում եմ» և «Այո, հիմնականում հասկանում եմ» պատասխանների մասնաբաժինը) (n=1,458; n=1,455). CAPI հետազոտություն դեռահասների հետ (n=567; n=564). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024)



Գծապատկեր 8. Դու երբևէ լսե՞լ ես, որ Երկիր մոլորակի կլիման կամ դրա եղանակային պայմանները փոփոխվում են (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Գծապատկեր 9. Դուք երբևէ լսե՞լ եք, որ Երկիր մոլորակի կլիման կամ դրա եղանակային պայմանները փոփոխվում են (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).




Ելակետային հետազոտությունում դեռահաս հարցվողների 92,7%-ը և մեծահասակների 95,9%-ը նշել են, որ լիովին կամ հիմնականում հասկանում են, թե ինչ է նշանակում կլիմայի փոփոխությունը: Այս պատկերն ամփոփիչում առանձնապես չի փոխվել. դեռահասների 93,8%-ը և մեծահասակների 94,5%-ը տվել են նույն պատասխանները (տե՛ս Գծապատկեր 7):


Ելակետային և ամփոփիչ հետազոտության արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ բարձրացել է դեռահասների և մեծահասակների իրազեկվածության մակարդակը՝ կապված այն գիտելիքների հետ, թե որոնք են կլիմայի փոփոխության պատճառները (աճ 4 տոկոսային կետով), ինչպիսին են կլիմայի փոփոխության հնարավոր հետևանքները (աճ 3.8 տոկոսային կետով), և թե ինչ կարելի է անել կլիմայի փոփոխությունը նվազեցնելու համար (աճ 11,3 տոկոսային կետով): Համեմատաբար դանդաղ է տեղեկացվածության մակարդակի առաջընթացը այն մասին, թե ինչպես պաշտպանվել և պաշտպանել ընտանիքին կլիմայի փոփոխությունից (տե՛ս

գծապատկեր 10 և 11): Ելակետային հետազոտության համեմատ փոքր-ինչ աճել է այն դեռահասների և մեծահասակների տոկոսը, ովքեր հայտնում են, որ «ընդհանրապես» կամ «հիմնականում տեղյակ չեն» այդ հարցից, ինչը ցույց է տալիս այս թեմայով իրազեկվածության ամենացածր մակարդակը: Ելակետային հետազոտությունում հարցվողների երկու խմբերում էլ ամենացածրն էր նրանց տոկոսը, ովքեր տեղյակ են այն մասին, թե ինչ կարելի է անել կլիմայի փոփոխությունը նվազեցնելու համար: Ամփոփիչում կրկնապատկվել է այն դեռահասների տոկոսը, ովքեր հայտնել են, որ լիովին տեղյակ են կլիմայի փոփոխության դեմ պայքարի հնարավորությունների մասին: Այս տոկոսը փոքր-ինչ աճել է նաև մեծահասակների շրջանում, ինչպես ցույց է տրված Գծապատկերներ 10-ում և 11-ում: Հարցվողների ժողովրդագրական խմբերի միջև էական տարբերություններ չեն հայտնաբերվել՝ բացառությամբ ԿԱՊԿՈՒ դեռահասների, ովքեր ամենաքիչն են տեղյակ այս հարցում քննարկված բոլոր կետերի վերաբերյալ (տե՛ս Աղյուսակ 11-ը՝ Հավելված 1-ում):

Գծապատկեր 10. Քո կարծիքով, որքանո՞վ ես Դու տեղյակ հետևյալ հարցերի մասին (n=1,516).
CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024)



Գծապատկեր 11. Զեր կարծիքով, որքանով եք տեղյակ հետևյալ հարցերի մասին (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).



Ելակետային հետազոտությունում դեռահաս հարցվողների մեծամասնությունը հայտնել է, որ ուսուցիչները խոսել են իրենց հետ այն մասին, թե որոնք են կլիմայի փոփոխության պատճառները և հնարավոր հետևանքները, մինչդեռ աշակերտների միայն կեսն է երբևէ լսել իրենց ուսուցիչներից այն մասին, թե ինչ կարելի է անել կլիմայի փոփոխությունը նվազեցնելու և իրենց ու իրենց ընտանիքը կլիմայի փոփոխությունից պաշտպանելու համար: Ամփոփիչ հետազոտությունում այս բոլոր ցուցանիշները փոքր-ինչ նվազել են: Դիտարկված միակ աճը դեռահասների այն տոկոսն է, որոնք հայտնել են, որ ուսուցիչները խոսել են իրենց հետ այն մասին, թե ինչ կարելի է անել կլիմայի փոփոխությունը նվազեցնելու համար (տե՛ս Գծապատկեր 12):

Սա նշանակում է, որ կլիմայի փոփոխության պատճառների և հետևանքների մասին իրազեկվածության առումով կա ամուր հիմք, և ծրագրային համայնքների ուսուցիչների կողմից գործնական գիտելիքների հաղորդման բացը որոշ չափով վերացվել է, ինչն առանցքային դեր ունի աշակերտներին՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարում ներգրավելու գործում:

Թեև կլիմայի փոփոխության պատճառների և հետևանքների վերաբերյալ մեծահասակների և դեռահասների նախնական տեղեկացվածությունը բարձր է, այնուամենայնիվ, հրատապ անհրաժեշտություն կա բարձրացնելու մեղմացման և պաշտպանության գործնական քայլերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Ժամանակի ընթացքում ներգրավվածության պահպանումն ու


ավելացումը, ինչպես նաև ուսուցիչներին՝ ավելի լավ վերապատրաստելու շարունակական ջանքերը կարող են օգնել հաղթահարել այս բացը և խթանել տեղեկացված ու նախաձեռնող անհատների սերունդը, ովքեր պատրաստ են պայքարել կլիմայի փոփոխության դեմ:

Կլիմայի փոփոխության հիմնական հետևանքների վերաբերյալ դեռահասների գիտելիքները գնահատելու համար նրանց խնդրել են նշել ճիշտ են, թե սխալ Գծապատկեր 13-ում ներկայացված յոթ դատողությունները: Հատկանշական է, որ կա կոնսենսուս բոլորի վերաբերյալ, բացառությամբ այն դատողության, որ կլիմայի փոփոխությունն ազդում է միայն որոշ վայրերի վրա. հարցվողները հիմնականում կարծում են, որ կլիմայի փոփոխությունը ազդում է ամբողջ մոլորակի վրա²¹:


Տվյալները ցույց են տալիս, որ և՛ դեռահասների, և՛ մեծահասակների գիտելիքները կլիմայի փոփոխության հիմնական հետևանքների մասին ժամանակի ընթացքում մնացել են համեմատաբար կայուն՝ առանց էական փոփոխությունների (տե՛ս Գծապատկերներ 13 և 14): «Կլիմայի փոփոխությունն ազդում է միայն որոշ վայրերի վրա» սխալ դատողությունը նշվել է որպես ճիշտ՝ ելակետային հետազոտությունում դեռահասների 36,7%-ի, իսկ ամփոփիչում՝ 35,0%-ի կողմից: Ի հակադրություն, մեծահասակների ավելի մեծ մասն է այս կեղծ պնդումը ճշմարիտ համարել՝ ելակետայինի 49,2%-ից ամփոփիչում աճելով 53,3%-ի: Սա վկայում է այն մասին, որ կլիմայի փոփոխության համատարած բնույթի վերաբերյալ մեծահասակների շրջանում առկա է նշանակալի թյուրըմբռնում:

²¹Adedeji, O., et al. (2014). Global climate change. Journal of Geoscience and Environment Protection, 2(2),114-1

Գծապատկեր 12. Քո ուսուցիչները երբևէ խոսե՞լ են այս թեմաների մասին դասերի ընթացքում քո և դասընկերներիդ հետ (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Գծապատկեր 13. Ի՞նչ ես կարծում, աշխարհում կլիմայի փոփոխության վերաբերյալ հետևյալ դատողություններից որո՞նք են ճիշտ (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Գծապատկեր 14. Ի՞նչ են կարծում, աշխարհում կլիմայի փոփոխության վերաբերյալ հետևյալ դատողություններից որո՞նք են ճիշտ (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).

Այն կփոխի ջերմաստիճանը և տեղումների քանակը այժմ և ապագայում	Ամփոփիչ (2024)	85.8%	4.7%	9.5%
	Ելակետային (2021)	80.9%	5.7%	13.5%
Այն ազդում է եղանակի և կլիմայի վրա ամբողջ աշխարհում	Ամփոփիչ (2024)	90.8%	5.3%	4.0%
	Ելակետային (2021)	92.2%	4.8%	3.0%
Այն առաջացնում է օդի ջերմաստիճանի բարձրացում	Ամփոփիչ (2024)	90.3%	3.8%	5.8%
	Ելակետային (2021)	94.3%	2.5%	3.2%
Այն հալեցնում է բևեռների սառցադաշտերը	Ամփոփիչ (2024)	88.5%	3.7%	7.8%
	Ելակետային (2021)	91.4%	3.4%	5.2%
Այն առաջացնում է ավելի շատ երաշտներ կամ ջրհեղեղներ	Ամփոփիչ (2024)	92.9%	3.7%	3.4%
	Ելակետային (2021)	93.9%	4.0%	2.1%
Այն առաջացնում է ավելի շատ մրրկահողմեր և փոթորիկներ	Ամփոփիչ (2024)	88.1%	5.7%	6.3%
	Ելակետային (2021)	87.5%	8.1%	4.4%
Այն ազդում է միայն որոշ վայրերի վրա	Ամփոփիչ (2024)	53.3%	41.3%	5.4%
	Ելակետային (2021)	49.2%	46.8%	4.0%

■ ճիշտ է ■ Սխալ է ■ Դժ. պ


Ելակետային ուսումնասիրության համեմատ՝ ամփոփիչում նկատվել է այն դեռահաս հարցվողների մասնաբաժնի աճ բոլոր խմբերում, ովքեր ճշմարիտ են համարել «Կլիմայի փոփոխությունը մարդկանց կողմից էլեկտրաէներգիայի օգտագործման և վառելիքի այրման հետևանք է» դատողությունը: Եթե ելակետայինում դեռահասների միայն 35,0%-ն էր տեղյակ, որ կլիմայի փոփոխությունները պայմանավորված են մարդկանց կողմից էլեկտրաէներգիայի օգտագործմամբ և վառելիքի այրմամբ, ապա ամփոփիչում նրանց թիվն աճել է մինչև 46,6%: Համապատասխանաբար, «Կլիմայի փոփոխությունը պարզապես բնական փոփոխություն է» դատողությունը ճիշտ համարողների տոկոսը նվազել է (տե՛ս Գծապատկեր 15): Այս հարցին մեծահասակների պատասխանների բաշխումն, ընդհանուր առմամբ, նման է դեռահասների պատասխանների բաշխմանը՝ առանց նշանակալի տարբերությունների ելակետային և ամփոփիչ հետազոտությունների միջև (տե՛ս Գծապատկեր 16):

Մարդկանց գործունեությունը, որպես կլիմայի փոփոխության պատճառ ճիշտ ճանաչած

դեռահասների թվաքանակի աճը, ինչպես նաև բնական պատճառների մասին սխալ պատկերացումների նվազումը փաստում են իրազեկցածության և ըմբռնման տեսանկյունից դրական միտման մասին: Սա ենթադրում է, որ կլիմայի փոփոխության խնդրի վերաբերյալ կրթական ջանքերը կամ հանրային դիսկուրսի ակտիվացումը կարող են ազդեցիկ լինել: Միևնույն ժամանակ, մեծահասակների պատասխանների կայունությունը ցույց է տալիս, որ կլիմայի փոփոխության պատճառների վերաբերյալ նրանց պատկերացումները ժամանակի ընթացքում մնացել են անփոփոխ:


Գոյություն ունի նշանակալի կոռելյացիա ինչպես հարցվողների սեռի, այնպես էլ կրթական մակարդակի միջև: Արական սեռի հարցվողներն ավելի հաճախ են «Կլիմայի փոփոխությունը մարդկանց կողմից էլեկտրաէներգիայի օգտագործման և վառելիքի այրման հետևանք է» դատողությունը ճիշտ համարել: Բացի այդ, բարձր կրթական մակարդակ ունեցող մեծահասակներն ավելի հաճախ են ճիշտ պատասխանել, քան միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեցողները:

Գծապատկեր 15. Ընտրի՛ր, խնդրեմ, հետևյալ դատողություններից ո՞րն է ճիշտ (n=1,516).
CAWI հետազոտություն ղեռահասաների հետ (2021; 2024).



- Կլիմայի փոփոխությունը մարդկանց կողմից էլեկտրաէներգիայի օգտագործման և վառելիքի այրման հետևանք է
- Կլիմայի փոփոխությունը պարզապես բնական փոփոխություն է
- Կլիմայի փոփոխությունը Աստծո կողմից տրված է
- Դժ. պ
- Չեմ հավատում, որ կլիման փոփոխվում է
- Այլ

Գծապատկեր 16. Հետևյալ դատողություններից ո՞րն է ճիշտ, ըստ Ձեզ (n=710; n=703).
 CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).



- Կլիմայի փոփոխությունը մարդկանց կողմից էլեկտրաէներգիայի օգտագործման և վառելիքի այրման հետևանք է
- Կլիմայի փոփոխությունը պարզապես բնական փոփոխություն է
- Կլիմայի փոփոխությունը Աստծո կողմից տրված է
- Դժ. պ. և այլ պատասխան

3.3. Վերաբերմունք

Հարցվողներին խնդրել էին գնահատել կլիմայի փոփոխության խնդրի կարևորությունն իրենց քաղաքի կամ գյուղի համար՝ օգտագործելով 1-ից 10 սանդղակը: Ելակետային և ամփոփիչ հետազոտությունների, ինչպես նաև առանձին խմբերի միջին արժեքները ներկայացված են Գծապատկեր 17-ում և 18-ում: Տվյալները ցույց են տալիս, որ միջին հաշվով կլիմայի փոփոխությունը համարվում է կարևոր խնդիր՝ առանց հարցվողների ժողովրդագրական խմբերի միջև ընկալումների նշանակալից տարբերությունների: Այնուամենայնիվ, ամփոփիչում, դեռահասների բոլոր խմբերը գնահատել են կլիմայի փոփոխության կարևորությունը իրենց համայնքների համար ավելի բարձր, քան ելակետային հարցմանը՝ միջին արժեքը բարձրացել է 8,2-ից 8,5-ի: Մեծահասակների շրջանում այս արժեքը մնացել է անփոփոխ՝ 8,5: Աշխարհի վերաբերյալ նույն հարցին մեծահասակ հարցվողների պատասխանների միջին արժեքը 8,8 է, ինչը ցույց է տալիս, որ մեծահասակների շրջանում կլիմայի փոփոխությունն ընկալվում է որպես գլոբալ մակարդակում ավելի հրատապ հիմնախնդիր, քան համայնքային մակարդակում: Համապատասխանաբար, դեռահասների ընկալումը կլիմայի փոփոխության կարևորության վերաբերյալ իրենց համայնքների համար կրկնակի աճել է, մինչդեռ մեծահասակների ընկալումները՝ մնացել անփոփոխ:



Մեծահասակ հարցվողներին խնդրել են դասակարգել Հայաստանի և ամբողջ աշխարհի համար առավել կարևոր խնդիրները՝ ըստ դրանց կարևորության: Ելակետային հետազոտությունում Հայաստանում բնապահպանական խնդիրները համարվում էին պակաս կարևոր, քան գործազրկությունը, աղքատությունն ու անվտանգության խնդիրները, սակայն, ավելի կարևոր, քան քաղաքական անկայունությունը, կորոնավիրուսի համավարակը և ժողովրդագրական խնդիրները:


Հետազոտական հարց 2.

Ելակետային և ամփոփիչ հետազոտությունների միջև կա՞ն արդյոք տարբերություններ՝ աշխարհում, Հայաստանում և համայնքների մակարդակում թիրախային խմբերի ընկալմամբ կլիմայի փոփոխության հիմնական խնդիրների վերաբերյալ, և ինչպե՞ս է փոխվել այդ խնդիրների նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը:

Ամփոփիչ հետազոտության արդյունքների համաձայն բնապահպանական խնդիրների կարևորությունը բարձրացել է՝ զբաղեցնելով երկրորդ տեղը: Քաղաքական անկայունությունը համարվել է ամենակարևոր խնդիրը ինչպես Հայաստանի, այնպես էլ ամբողջ աշխարհի համար՝ ի հակադրություն ելակետայինի, որտեղ առաջին տեղում անվտանգության խնդիրներն էին: Ամփոփիչում մեծահասակների 16.1%-ը բնապահպանական խնդիրները գնահատել է որպես Հայաստանում ամենակարևորը՝ ելակետային հարցման 6.9%-ի համեմատ, այսինքն՝ բնապահպանական խնդիրների կարևորությունն աճել է 9.2 տոկոսային կետով (տե՛ս Գծապատկեր 19): Ինչ վերաբերում է աշխարհի խնդիրներին, ապա բնապահպանական խնդիրները կարևորությամբ զբաղեցնում են երրորդ տեղը՝ քաղաքական անկայունությունից և գործազրկությունից հետո (տե՛ս Գծապատկեր 20):


Գծապատկեր 17. Կլիմայի փոփոխության ընկալումը որպես խնդիր հարցվողների բնակավայրերում (n=1,516).
CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).

Հարցի տեքստը. «Կլիմայի փոփոխությունը» վերաբերում է ժամանակի ընթացքում եղանակի փոփոխություններին: Հաշվի առնելով այս բացատրությունը և Ձեր սեփական դիտարկումները՝ ըստ Ձեզ, այս պահին կլիմայի փոփոխությունը որքանո՞վ կարևոր խնդիր Ձեր համայնքի համար: (Խնդրում են օգտագործել 1-10 բալային սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է «ընդհանրապես կարևոր չէ», իսկ 10-ը՝ «չափազանց կարևոր է». Դուք կարող եք օգտագործել 1-10 միջակայքում ցանկացած թիվ: Հաշվարկված են միջին արժեքները:




Գծապատկեր 18. Կլիմայի փոփոխության ընկալումը որպես խնդիր հարցվողների բնակավայրերում (n=710; n=703).
CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).


Հարցի տեքստը. «Կլիմայի փոփոխությունը» վերաբերում է ժամանակի ընթացքում եղանակի փոփոխություններին: Հաշվի առնելով այս բացատրությունը և Ձեր սեփական դիտարկումները՝ ըստ Ձեզ, այս պահին կլիմայի փոփոխությունը որքանո՞վ կարևոր խնդիր Ձեր համայնքի համար: (Խնդրում են օգտագործել 1-10 բալային սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է «ընդհանրապես կարևոր չէ», իսկ 10-ը՝ «չափազանց կարևոր է». Դուք կարող եք օգտագործել 1-10 միջակայքում ցանկացած թիվ: Հաշվարկված են միջին արժեքները:



Գծապատկեր 19. Ամենակարևոր խնդիրները Հայաստանում՝ ըստ մեծահասակ հարցվողների (n=710; n=703).
 CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).



Գծապատկեր 20. Ամենակարևոր խնդիրներն Աշխարհում՝ ըստ մեծահասակ հարցվողների (n=710; n=703).
 CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024)




Ելակետային հետազոտությունում մեծահասակ հարցվողներն անտառահատումներն ու երաշտը համարել են Հայաստանի առջև ծառացած հիմնական բնապահպանական խնդիրներ, իսկ ամփոփիչում՝ ջրի, օդի աղտոտվածության և թափոնների վերամշակման հետ կապված խնդիրները: Աշխարհի մասշտաբով, թունավոր գազերի արտանետումները նշվել են որպես բնապահպանական խնդիր՝ աղբի վերամշակման փոխարեն, ջրի և օդի աղտոտվածության խնդիրների հետ միասին (տե՛ս Գծապատկեր 21):

Հարցվողներին խնդրել են գնահատել, թե որքանով են նրանք մտահոգված կլիմայի փոփոխությամբ՝ աշխարհում, Հայաստանում և իրենց քաղաքում/ գյուղում: Գծապատկեր 22-ը ցույց է տալիս, որ դեռահասներն ավելի շատ մտահոգված են կլիմայի փոփոխությամբ իրենց անմիջական միջավայրում, քան ամբողջ աշխարհում:


Ջարմանալիորեն, ամփոփիչ հետազոտությունը ցույց է տվել, որ ելակետային հարցման համեմատ աշակերտները ավելի քիչ են մտահոգված Հայաստանում և իրենց քաղաքում/գյուղում կլիմայի փոփոխությամբ, քան գլոբալ մակարդակում:

Այնուամենայնիվ, ամբողջ աշխարհի համար կլիմայի փոփոխությամբ լիովին մտահոգվածների մասնաբաժինը ամփոփիչ հետազոտությունում փոքր-ինչ աճել է: Գծապատկեր 22-ում ներկայացված տվյալների տարանջատումն ըստ սեռի ցույց է տալիս, որ իգական սեռի դեռահասներն ավելի շատ են մտահոգված կլիմայի փոփոխությամբ իրենց քաղաքում/գյուղում, Հայաստանում և աշխարհում, քան արական սեռի դեռահասները: Դեռահասների շրջանում ամենաքիչ մտահոգված տարիքային խումբը 15-16 տարեկաններն են (տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակներ 12-14-ը և 26-28-ը):

Գծապատկեր 21. Ասացե՛ք, խնդրեմ, որո՞նք են բնապահպանական հիմնական խնդիրները, որոնց բախվում է այսօր Աշխարհը/Հայաստանը: Մինչև 3 պատասխան յուրաքանչյուր հարցվողից. CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2024), n=703



Գծապատկեր 22. Որքանո՞վ ես մտահոգված կլիմայի փոփոխությամբ... (n=1,516).
CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Մեծահասակ հարցվողներն ավելի շատ մտահոգված են կլիմայի փոփոխությամբ Հայաստանում և իրենց անմիջական միջավայրում, քան ամբողջ աշխարհում (տե՛ս Գծապատկեր 24): Ամփոփիչ հետազոտությունում Հայաստանում և իրենց քաղաքում/գյուղում կլիմայի փոփոխությամբ մտահոգվածների տոկոսը ելակետային հարցման համեմատ նվազել է:


Ելակետային հարցմանը հարցվողների մեծամասնությունը ճանաչել էր ջուրը խնայելու և այն գիտակցված օգտագործելու կարևորությունը: Այնուամենայնիվ, դեռահասների այն տոկոսը, ովքեր լիովին համաձայն էին այս պնդման հետ, ելակետային 71,2%-ից նվազել է, ամփոփիչ հարցմանը կազմելով 58,3%: Նմանատիպ միտում է նկատվում շրջակա միջավայրի պահպանման գործում երիտասարդների և դեռահասների դերի մասին դատողության ցուցանիշերում: Ելակետային հետազոտությունում, դեռահասների 50,5%-ը լիովին համաձայն էր, որ իրենց համայնքի երիտասարդներն ու երեխաները կարող են փոփոխություններ բերել շրջակա միջավայրի պահպանության գործում: Այնուամենայնիվ, ամփոփիչ հարցմանը դեռահասների միայն 37,4%-ն է լիովին համաձայնել այս դատողության հետ (տե՛ս Հավելված 1-ի

Գծապատկեր 25-ը և Աղյուսակ 15-ը): Սա նշանակում է, որ հետազոտության տարբեր փուլերում դեռահասների շրջանում այս բնապահպանական խնդիրների վերաբերյալ վերաբերմունքի կամ իրազեկվածության մակարդակի փոփոխություն է տեղի ունեցել:



Գծապատկեր 23. Որքանով ես մտահոգված կլիմայի փոփոխությամբ . . . (n=1,516).


CAWI հետազոտություն դեռահասների հետ (2024). Պատասխանների բաշխումն ըստ սեռի և տարիքի



- Լիովին մտահոգված եմ
- Մի փոքր մտահոգված եմ
- Ինձ համար միևնույնն է
- Այդքան էլ մտահոգված չեմ
- Ընդհանրապես մտահոգված չեմ

Գծապատկեր 24. Որքանով եք մտահոգված կլիմայի փոփոխությամբ... (n=710; n=703).

CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024) (n=710; n=703).




Հետաքրքիր է, որ ելակետային հետազոտության համեմատ շատ չի փոխվել այն դեռահաս հարցվողների թիվը, ովքեր ընդհանրապես համաձայն չեն այն դատողության հետ, որ շրջակա միջավայրին վնասելն արդարացված է, եթե դա տնտեսական օգուտ կամ փող է բերում երկրին: Ելակետային հետազոտությունում, դեռահասների 59,4%-ն ընդհանրապես համաձայն չէին, որ շրջակա միջավայրին կարելի է վնասել, եթե դա տնտեսական օգուտ կամ փող է բերում երկրին: Ամփոփիչ հարցմանը, դեռահասների 60,5%-ն է նշել, որ ընդհանրապես համաձայն չէ այս դատողության հետ (տե՛ս Գծապատկեր 25), ինչը ցույց է տալիս, որ ամփոփիչ փուլում ավելի քիչ դեռահասներ են հանդուրժում շրջակա միջավայրին հասցված վնասը, քան ելակետայինում: Ի հավելումն, ավելի շատ իգական սեռի (72.7%) դեռահասներ ընդհանրապես համաձայն չեն այս դատողության հետ, քան արական սեռի հարցվողները (57.8%), թեև ժողովրդագրական այլ խմբերի միջև նշանակալի տարբերություններ չեն հայտնաբերվել (տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակ 15): Նույն կերպ, ելակետային հարցմանը դեռահասների 67.1%-ը համաձայն չէր, որ նորմալ է, եթե իրենց տարածքում որոշ կենդանիների կամ բույսերի տեսակներ վերանան՝ մարդկանց կարիքները բավարարելու համար, մինչդեռ ամփոփիչում այս ցուցանիշը փոքր-ինչ նվազել է՝ կազմելով 63,8%:

Հետևաբար, ամփոփիչ հետազոտությունում ավելի քիչ դեռահասներ են հանդուրժում շրջակա միջավայրին հասցված վնասը, քան ելակետայինում: Կրկին, իգական սեռի դեռահասներն (73.2%) ավելի շատ են հայտնել անհամաձայնություն, քան արական սեռի (62.9%) ներկայացուցիչները (տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակ 17):

Բացի այդ, դեռահասները դեռ մերժում են այն գաղափարը, ըստ որի մենք ոչինչ չենք կարող անել շրջակա միջավայրի պայմանները փոխելու համար: Ընդ որում, դրա հետ խիստ անհամաձայնություն են հայտնել ելակետային հետազոտությունում 49,7%-ը, իսկ ամփոփիչում՝ 53,7%-ը: Իգական սեռի դեռահասներն ավելի հստակ անհամաձայնություն են հայտնել աղջիկների 62,7%-ն ընդհանրապես համաձայն չէ այդ դատողության հետ՝ տղաների 51,2%-ի համեմատ (տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակ 16): Ընդհանուր առմամբ, նկատվում է ջրի խելամիտ օգտագործման և երիտասարդների կողմից իրենց համայնքներում փոփոխություններ բերելու մասին դատողությունների հանդեպ դրական վերաբերմունքի նվազում, մինչդեռ շրջակա միջավայրին վնասելու մասին երկու դատողությունների դեպքում կա բարելավում, որտեղ իգական սեռի հարցվողներն ավելի քիչ հանդուրժող են շրջակա միջավայրը վնասելու նկատմամբ, քան արական սեռի հարցվողները:

Գծապատկեր 25. Համաձայն էք Հայաստանի շրջակա միջավայրի վերաբերյալ հետևյալ դատողությունների հետ (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2024)




Մեծահասակներին ներկայացվել է կլիմայի փոփոխության նկատմամբ վերաբերմունքը չափող դատողությունների ավելի մեծ ցանկ, քան դեռահասներին (տե՛ս Գծապատկեր 26): Մեծահասակների մեծամասնությունը գիտակցում է ապագա սերունդների համար շրջակա միջավայրի պահպանման կարևորությունը, բնության փխրունությունը, ինչպես նաև շրջակա միջավայրին վնասելու՝ (ինչպիսին է ջրի պակասը) ուղղակիորեն ազդեցությունը բոլոր մարդկանց կյանքի վրա: Նրանք կարծում են, որ քաղաքական գործիչները միշտ պետք է իրենց օրակարգում պահեն բնապահպանական խնդիրները, որ բնապահպանական ակտիվությունը և երիտասարդների ու դեռահասների ներգրավվածությունը կարող են փոփոխություն մտցնել շրջակա միջավայրի պահպանության գործում, և որ փոքր համայնքները ավելի լավ են պաշտպանում շրջակա միջավայրը, քան խոշոր քաղաքները: Ամփոփիչ հետազոտությունում մեծահասակներն ավելի շատ են վստահություն հայտնել շրջակա միջավայրի պահպանության գործում երիտասարդների

և դեռահասների դերի հարցում, քան իրենք՝ դեռահասները: Ընդ որում, մեծահասակների 61,2%-ն է նման վստահություն հայտնում դեռահասների 37,4%-ի համեմատ: Այնուամենայնիվ, դեռահասները ավելի քիչ են հանդուրժում շրջակա միջավայրին հասցված վնասը, քան մեծահասակները: Ամփոփիչ հարցմանը, մեծահասակների 11,8%-ի համեմատ, դեռահասների 4,1%-ն է լիովին համաձայնել, որ շրջակա միջավայրին կարելի է վնասել, եթե այն տնտեսական օգուտ կամ փող է բերում երկրին: Ավելին, մեծահասակների 9,0%-ի համեմատ, դեռահաս հարցվողների 3,1%-ն է լիովին համաձայնել, որ նորմալ է, եթե իրենց գյուղում կամ քաղաքում որոշ կենդանիների կամ բույսերի տեսակներ ոչնչացվեն՝ մարդկանց կարիքները բավարարելու համար: Այնուամենայնիվ, զգալիորեն աճել է այն մեծահասակների տոկոսը, ովքեր ընդհանրապես համաձայն չեն այն դատողության հետ, որ շրջակա միջավայրին հասցված վնասն արդարացվում է տնտեսական օգուտով: Ելակետային հարցման 53,0%-ի համեմատ՝ ամփոփիչում, մեծահասակների 62,3%-ն

ընդհանրապես համաձայն չէ, որ շրջակա միջավայրին կարելի է վնասել, եթե դա տնտեսական օգուտ կամ փող է բերում երկրին: Նմանապես ելակետային հարցման 65,4%-ի համեմատ, ամփոփիչում մեծահասակների 73,5%-ն ընդհանրապես համաձայն չէ, որ նորմալ է, եթե իրենց գյուղում կամ քաղաքում որոշ կենդանիների կամ բույսերի տեսակներ ոչնչացվեն՝ մարդկանց կարիքները բավարարելու համար (տե՛ս Հավելված 1-ի Գծապատկեր 25, 26 և Աղյուսակներ 34, 35):


Դեռահասների (70,7%) և մեծահասակների (61,7%) մեծամասնությունը կարծում է, որ Հայաստանում կլիմայի փոփոխությունը կանխելու կամ դրա ազդեցությունը նվազեցնելու համար քայլեր ձեռնարկելը շատ կարևոր է: Այս տոկոսն աճել է դեռահասների շրջանում ելակետային հետազոտության արդյունքների համեմատ (62,3%), սակայն մեծահասակների շրջանում նշանակալիորեն չի փոխվել (տե՛ս Հավելված 1-ի Գծապատկեր 27, 28 և Աղյուսակներ 20, 29):

Գծապատկեր 26. Համաձայն էք Հայաստանի շրջակա միջավայրի վերաբերյալ հետևյալ դատողությունների հետ (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).




■ Լիովին համաձայն եմ
 ■ Ավելի շուտ համաձայն եմ
 ■ Ինձ համար միևնույնն է
■ Ավելի շուտ համաձայն չեմ
 ■ Ընդհանրապես համաձայն չեմ
 ■ Դժ. պ

Գծապատկեր 27. Քո կարծիքով, որքանո՞վ է կարևոր քայլեր ձեռնարկել Հայաստանում կլիմայի փոփոխությունը կանխելու կամ դրա ազդեցությունը նվազեցնելու համար (n=1,516).
CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Գծապատկեր 28. Ձեր կարծիքով որքանո՞վ է կարևոր քայլեր ձեռնարկել Հայաստանում կլիմայի փոփոխությունը կանխելու կամ դրա ազդեցությունը նվազեցնելու համար (n=710; n=703).
CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).



Հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ շրջակա միջավայրի պաշտպանության գործում առանցքային դերակատարը պետք է լինի ՀՀ կառավարությունը. նման կարծիք են արտահայտել դեռահասների 43,2%, իսկ մեծահասակների՝ 57,6%-ը: Դեռահասների 40,4%-ի և մեծահասակների 42,6%-ի կողմից հաջորդ՝ ամենահաճախ նշվող տարբերակներն են բնապահպանական կազմակերպությունները, ՀԿ-ներն ու ակտիվիստները: Դեռահասները երրորդ տեղում նշել են Հայաստանի ամբողջ մեծահասակ բնակչությունը (31,3%), որին երրորդ տեղով հաջորդում են բոլոր երիտասարդներն ու երեխաները (20,4%): Մեծահասակներն իրենց դասել են երրորդ տեղում (28,2%), որին հաջորդել են համայնքների ղեկավարները և մարզային իշխանությունները (29,1%), ինչպես նաև գիտնականները, համալսարանները և դպրոցները (19,3%): Մեծահասակների պատասխաններում բոլոր


երիտասարդներն ու երեխաները, որպես այս հարցում դերակատարներ, հինգերորդ տեղում են՝ կազմելով ընդամենը 12,4%:

Այսպիսով, հարցվողների մեծամասնությունը՝ և՛ դեռահասները, և՛ մեծահասակները, շրջակա միջավայրի պաշտպանության գործում գլխավոր պատասխանատու դերակատար են համարում ՀՀ կառավարությանը, որին հաջորդում են բնապահպանական կազմակերպություններն ու ակտիվիստները: Այնուամենայնիվ, դեռահասների և մեծահասակների միջև կա տարբերություն՝ շրջակա միջավայրի պահպանմանը նպաստելու գործում իրենց դերի գնահատման առումով, ինչն ընդգծում է տարբեր տարիքային խմբերում դերերի և պարտականությունների ընկալման հնարավոր տարբերությունները:


Ելակետային հետազոտության արդյունքների համեմատ՝ աճել է կլիմայի փոփոխության ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու գործում բոլոր դերակատարների կարևորության գիտակցումը: Ամփոփիչ հետազոտությունում դեռահաս հարցվողների 20,4%-ը՝ ելակետային հարցման 13,1%-ի համեմատ, նշել է բոլոր երիտասարդներին ու երեխաներին՝ որպես այն խումբ, որը պետք է քայլեր ձեռնարկի կլիմայի փոփոխության դեմ պայքարելու համար (տե՛ս Գծապատկեր 29): Եվ ընդհակառակը, Հայաստանի մեծահասակ բնակչությանը

մեծահասակ հարցվողներն ավելի հազվադեպ են նշվել: Այն ամփոփիչ հետազոտությունում կազմել է 28,2%՝ ելակետային հարցման 30,3%-ի համեմատ (տե՛ս Գծապատկեր 30): Բիզնեսների և խոշոր ընկերությունների դերը կլիմայի փոփոխության ազդեցությունը կանխելու և նվազեցնելու գործում թերազնահատված է հարցվողների երկու խմբերի կողմից էլ: Հարցվողների ժողովրդագրական խմբերի միջև նշանակալից տարբերություններ չեն հայտնաբերվել (տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակ 21):

Գծապատկեր 29. Առաջին հերթին ո՞վ պետք է քայլեր ձեռնարկի Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու համար (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Գծապատկեր 30. Առաջին հերթին ո՞վ պետք է քայլեր ձեռնարկի Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու համար (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).



Մեծահասակ հարցվողներին խնդրել էին ցանկից ընտրել Հայաստանի բնութային պահպանելու համար հինգ քայլ՝ ըստ կարևորության: Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 31-ում: Մեծահասակ հարցվողների 60,6%-ը կարծում է, որ թափոնների հավաքման և հեռացման բարելավումը կարևոր է Հայաստանում բնության պահպանության համար,

իսկ 52,8%-ն անհրաժեշտ է համարում կանաչապատել քաղաքի հասարակական և մասնավոր տարածքները: Մեծահասակների շրջանում ամենահազվադեպ հանդիպող պատասխաններն են հին մեքենաների և այլ տրանսպորտային միջոցների ներմուծման ու օգտագործման կարգավորումը (15,1%), ինչպես նաև էկոտուրիզմի խթանումը (14,1%):

Գծապատկեր 31. Ի՞նչ եք կարծում, ի՞նչ պետք է արվի, որպեսզի պահպանվի Հայաստանի բնությունը: Մինչև 5 պատասխան յուրաքանչյուր հարցվողից (n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2024).




Ամփոփիչ հետազոտությունում մեծահասակներին և դեռահասներին հարցրել են իրենց զգացողությունների մասին, որ ունեցել են, երբ վերջին անգամ կարդացել կամ լսել են որևէ նյութ կլիմայի փոփոխության վերաբերյալ: Մեծահասակներն ավելի հաճախ են նյարդայնացել/տխրել՝ ապագայի հետ կապված: Ընդ որում, այս դատողության հետ լիովին համաձայն է մեծահասակների 39,5%-ը՝ դեռահասների 15,0%-ի համեմատ: Այլ դատողությունների պատասխանների բաշխումը մեծահասակների և դեռահասների շրջանում բավական նման է: Հարցվողների մեծամասնությունը

նշել է, որ բարկացել է այն պատճառով, որ բավարար բան չի արվում Կլիմայի փոփոխության հետ կապված, և շահադրոշմ է ավելին իմանալ այդ թեմայով: Շատերը համոզվել են, որ իրենք կարող են նվազեցնել Կլիմայի փոփոխության հետևանքները: Հարցվողների շատ փոքր մասնաբաժին է նշել, որ ցայրացել է՝ Կլիմայի փոփոխության նկատմամբ չափից շատ ուշադրության պատճառով: Ինչպես ցույց է տրված Գծապատկեր 32-ում, այս դատողության հետ լիովին կամ ավելի շուտ համաձայն են մեծահասակների 19,4%, իսկ դեռահասների՝ 18,0%-ը:

Ընդհանուր առմամբ, թեև մեծահասակները և դեռահասները կարող են կլիմայի փոփոխության վերաբերյալ ունենալ նմանվող մտահոգություններ և վերաբերմունք, կյանքի փորձի, պատասխանատվության, տեղեկատվական աղբյուրների, հոգեբանական զարգացման և մշակութային նորմերի տարբերությունները

նպաստում են այս երկու խմբերի միջև տարբեր հուզական արձագանքներին: Չնայած նրան, որ դեռահասները նույնպես մտահոգված են իրենց ապագայով, նրանք ավելի քիչ անձնական պատասխանատվություն են զգում, ինչպես ցույց է տրված վերևում, և, հետևաբար, բացասական հույզեր ավելի քիչ են ապրում:

Գծապատկեր 32. Որքանո՞վ եք համաձայն հետևյալ դատողությունների հետ, որոնք բնութագրում են այն զգացողությունները, որ ունեցել եք, երբ վերջին անգամ կարդացել կամ լսել եք որևէ նյութ Կլիմայի փոփոխությունների մասին (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (n=703), CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2024).



3.4. Փորձառություն և վարք

Ելակետային հետազոտությունում դեռահասների 69,5%-ը հայտնել է, որ հաճախել է կլիմայի փոփոխության վերաբերյալ դպրոցական դասերի: Ինչպես ցույց է տրված Գծապատկեր 33-ում, ամփոփիչ հետազոտությունում այս թիվն աճել է մինչև 73,1%, ինչը ելակետայինից ավելի է մոտ 4 տոկոսային կետով:

Ելակետային հետազոտությունում դեռահաս հարցվողների 90%-ը պատրաստակամություն է հայտնել ավելի իմանալու կլիմայի փոփոխության մասին: Ամփոփիչ հետազոտությունում այս ցուցանիշը գրեթե չի փոխվել՝ 89,1%: Իսկ մեծահասակ հարցվողների շրջանում ելակետային հետազոտությունում նման պատրաստակամություն է հայտնել հարցվողների 72,5%-ը, սակայն ամփոփիչ հարցմանը այդ տոկոսը նվազել է՝ կազմելով 66,4%:

Հետազոտական հարց 4.

Որքանո՞վ է աճել/նվազել թիրախային խմբերի պատրաստակամությունը՝ ստանալու կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև գիտելիքներ և հատուկ հմտություններ՝ դրա ազդեցությունները կանխելու, կառավարելու կամ նվազեցնելու համար:

Գծապատկեր 34-ը ցույց է տալիս դեռահաս հարցվողների նախասիրությունների փոփոխությունները՝ կլիմայի փոփոխության մասին տեղեկատվություն ստանալու աղբյուրների վերաբերյալ: Ելակետային հարցմանը դեռահասները նախընտրում էին կլիմայի փոփոխության մասին տեղեկատվություն

ստանալ դպրոցի ուսուցիչներից և տնօրինությունից (47,4%), հեռուստատեսությունից (41,8%) ու համացանցից (39,9%՝ 1307 հարցվողներից): Իսկ ամփոփիչ հետազոտությունում, դեռահասները նախապատվություն են տալիս համացանցին (49,2%), դպրոցի ուսուցիչներին և տնօրինությանը (45,6%), ինչպես նաև դպրոցական հետազոտական կամ նախագծային աշխատանքներին (42,5%)՝ հետ մղելով հեռուստատեսությունը (33,7%): Հարկ է նշել, որ **Ծրագրի արդյունքում աշակերտները սկսել են հասկանալ և արժևորել կլիմայի փոփոխության վերաբերյալ նախագծային ուսուցման ձևաչափը:** Ելակետային հետազոտության համեմատ, նշանակալիորեն աճել է նրանց տոկոսը, ովքեր կցանկանալին տեղեկատվություն ստանալ կլիմայի փոփոխության վերաբերյալ դպրոցական հետազոտական կամ նախագծային աշխատանքներից՝ 16,3%-ից ամփոփիչ հարցմանը դառնալով 42,5%: Նշանակալի աճ նկատվել է նաև կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկատվության վստահելի աղբյուրների ընկալումներում՝ համայնքի ղեկավարներին, (Ելակետայինում 6,2%-ից ամփոփիչ հարցմանը կազմել է 21,2%), ինչպես նաև դպրոցականներին և այլ պատանիներին (Ելակետայինում 5,8%-ից ամփոփիչում դառնալով 14,3%) որպես տեղեկատվության աղբյուր


Հետազոտական հարց 3.

Որքանո՞վ են փոխվել ամփոփիչ հետազոտությունում կլիմայի փոփոխության վերաբերյալ թիրախային խմբերի համար տեղեկատվության հիմնական աղբյուրները՝ Ելակետային հարցման համեմատ:


ընտրելու առումով: Ամենաերիտասարդ աշակերտները (6-րդ դասարան) հակված են որպես տեղեկատվության աղբյուր նախընտրել դպրոցի ուսուցիչներին ավելի հաճախ, քան տարիքով ավելի մեծերը (տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակ 23):

Ելակետային հետազոտությունում մեծահասակները նախընտրում էին կլիմայի փոփոխության մասին տեղեկատվություն ստանալ հեռուստատեսությունից, համացանցից և սոցիալական ցանցերից: Ամփոփիչ հարցմանը նախապատվությունները գրեթե չեն փոխվել: Այնուամենայնիվ, հեռուստատեսություն նախընտրող մեծահասակների տոկոսը նվազել է՝ Ելակետային հետազոտության 73,4%-ից ամփոփիչում կազմելով 61,6% (տե՛ս Գծապատկեր 35):


Գծապատկեր 33. Դու երբևէ մասնակցե՞լ ես կլիմայի փոփոխության թեմայով դասի քո դպրոցում (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Գծապատկեր 34. Հետևյալ միջոցներից որո՞վ կցանկանայիր տեղեկություններ ստանալ կլիմայի փոփոխության և դրանից ջր համայնքը պաշտպանելու մեթոդների մասին: Մինչև 3 պատասխան յուրաքանչյուր հարցվողից (n=1,364; n=1,307). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Գծապատկեր 35. Հետևյալ միջոցներից որո՞վ կցանկանայիր տեղեկություններ ստանալ կլիմայի փոփոխության և դրանից ջր համայնքը պաշտպանելու մեթոդների մասին: Մինչև 3 պատասխան յուրաքանչյուր հարցվողից (n=515; n=450). CAPI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024)



Դեռահաս հարցվողների մեծամասնությունը՝ 78,2%-ը հայտնել է, որ փակում է ջրի ծորակը, երբ դրա կարիքը չկա, 65,1%-ն անջատում է հոսանքը կամ լույսերը, երբ դուրս է գալիս սենյակից, իսկ 47,4%-ը բույսեր և ծաղիկներ է աճեցնում պատշգամբում կամ պարտեզում: Մեծահասակ հարցվողներն ավելի հաճախ են ցուցաբերում էկոլոգիապես բարենպաստ վարքագիծ, քան դեռահասները: Օրինակ, մեծահասակ հարցվողների 93%-ն է փակում ջրի ծորակը, երբ դրա կարիքը չկա, իսկ դեռահասների՝ 78,2%-ը: Ավելին, մեծահասակ հարցվողների 84,8%-ն է անջատում հոսանքը կամ լույսերը, երբ դուրս է գալիս սենյակից, մինչդեռ դեռահասների՝ միայն 65,1%-ը: Ինչ վերաբերում է պատշգամբում կամ պարտեզում բույսեր և ծաղիկներ աճեցնելուն, ապա մեծահասակ հարցվողների 81,8%-ն է զբաղվում նման գործունեությամբ, իսկ դեռահասների՝ ընդամենը 47,4%-ը:

Գծապատկեր 37-ը ցույց է տալիս, որ մեծահասակների շրջանում էկոլոգիապես բարենպաստ վարքագիծը ընդունման աճի հստակ միտում կա: Մեծահասակ հարցվողների մեծամասնությունը խուսափում է տունը, շինության ներսը տաքացնելու համար պինդ վառելիք (գոմաղբ, ածուխ, մեքենայի օգտագործված յուղ), ինչպես նաև տերևներ, անիվներ, պլաստմասե

իրեր և այլ թափոններ այրելուց: Սակայն, այն մեծահասակների մասնաբաժինը, ովքեր խուսափում են տերևներ, անիվներ, պլաստմասե իրեր և այլ թափոններ այրելուց, ելակետային ուսումնասիրության 65,1%-ից ամփոփիչ հարցմանը նվազել է մինչև 59,5%:

Հինգ դեռահաս հարցվողներից մեկն է ավելի շատ գրքեր կարդում պլանշետից, համակարգչից, քան՝ տպագիր, հնարավորության դեպքում ժամանակ ծախսում աղբը տեսակավորելու համար, և իր հետ կտորե տոպրակ տանում խանութ՝ մեկանգամյա օգտագործման ցելոֆանե տոպրակների օգտագործումից խուսափելու համար: Հետաքրքիր է, որ դեռահասների շրջանում մեկանգամյա օգտագործման ցելոֆանե տոպրակների


Հետազոտական հարց 6.

Ելակետային հարցման համեմատ, որքանո՞վ են մեծահասակները/դեռահասները ներկայումս կարգավորում, հարմարեցնում իրենց վարքագիծը՝ կլիմայի փոփոխությունը կանխելու համար, և որքանո՞վ են նրանք պատրաստ զիջումների գնալ և հետագայում հարմարեցնել իրենց վարքագիծը:

օգտագործումը ելակետային հետազոտության համեմատ (9,8%) ամփոփիչ հարցմանը գրեթե կրկնապատկվել է (18,4%): Այնուամենայնիվ, ամփոփիչ փուլում նշանակալի կերպով չի փոխվել նրանց մասնաբաժինը, ովքեր ավելի շատ գրքեր են կարդում պլանշետից, համակարգչից, քան՝ տպագիր, և հնարավորության դեպքում ժամանակ են ծախսում աղբը տեսակավորելու համար: Ամփոփիչ հարցմանը ավելի քիչ դեռահասներ են հայտնել, որ ծաղիկներ են աճեցնում (47,4%՝ ելակետայինի 60,3%-ի համեմատ), անջատում հոսանքը, երբ դուրս են գալիս սենյակից (65,1%՝ ելակետայինի 70,8%-ի համեմատ), և փակում ջրի ծորակը, երբ դրա կարիքը չկա (78,2%՝ ելակետայինի 84,2%-ի համեմատ) (տե՛ս Գծապատկեր 36):

Գծապատկեր 38-ը ցույց է տալիս, որ գյուղական բնակավայրերում ապրող դեռահասներն ավելի հաճախ են դրսևորում էկոլոգիապես բարենպաստ վարքագիծ, քան քաղաքային բնակավայրերում ապրող դեռահասները: Ավելին, Գծապատկեր 39-ը ցույց է տալիս, որ իգական սեռի դեռահասներն ավելի հաճախ են ձեռնարկում շրջակա միջավայրի վնասը նվազեցնելուն ուղղված գործողություններ, քան արական սեռի դեռահասները: Իսկ Գծապատկեր 40-ը ցույց է տալիս, որ ԿԱՊԿՈՒ դեռահասներն ավելի քիչ գործողություններ են ձեռնարկում շրջակա միջավայրի վնասը նվազեցնելու համար՝ ԿԱՊԿ չունեցող դեռահասների համեմատ (տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակ 24-ը):

Գծապատկեր 36. Ասա՛, խնդրեմ, Դու սովորաբար կատարում ես հետևյալ գործողությունները (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



0% 10% 20% 30% 40% 50% 60% 70% 80% 90% 100%

■ Այո ■ Հիմնականում այո ■ Հիմնականում ոչ ■ Ոչ ■ Դժ. պ


Գծապատկեր 37. Ասացե՛ք խնդրեմ, Դուք սովորաբար կատարում եք հետևյալ գործողությունները (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).

Ես ջրի ծորակը փակում եմ, երբ դրա կարիքը չկա	Ամփոփիչ (2024)	93.0%	3.6%	2.7%	0.7%
	Ելակետային (2021)	89.5%	7.0%	0.6%	2.7%
Ես անջատում եմ հոսանքը կամ լույսերը, երբ դուրս եմ գալիս սենյակից	Ամփոփիչ (2024)	84.8%	9.1%	1.0%	5.1%
	Ելակետային (2021)	79.4%	13.2%	2.2%	5.3%
Ես բույսեր և ծաղիկներ եմ աճեցնում պատշգամբում կամ պարտեզում	Ամփոփիչ (2024)	81.1%	6.4%	1.6%	11.0%
	Ելակետային (2021)	74.2%	5.8%	2.2%	17.8%
Ես խուսափում եմ տերևների, անիվների, պլաստմասե իրեր և այլ թափոնն եր այրելուց	Ամփոփիչ (2024)	62.9%	6.0%	5.5%	24.0%
	Ելակետային (2021)	66.2%	8.4%	7.8%	16.7%
Ես ես խուսափում եմ պինդ վառելիք (գոմարը, ածուխ, մեքենայի օգտագործված յուղ) այրելուց տունը, շինության ներսը տաքացնելու համար	Ամփոփիչ (2024)	59.5%	2.4%	3.1%	31.0%
	Ելակետային (2021)	65.1%	3.8%	5.3%	24.6%
Հնարավորության դեպքում ես ժամանակ եմ ծախսում աղբը տեսակավորելու համար, որպեսզի այն թափեմ հատուկ աղբարկղերում	Ամփոփիչ (2024)	33.0%	8.0%	2.8%	37.7%
	Ելակետային (2021)	30.5%	14.3%	6.3%	48.4%
Ես ինձ հետ կտորե տոպրակ եմ տանում խանութ, որպեսզի խուսափեմ մեկանգամյա օգտագործման ցեղֆանե տոպրակների օգտագործումից	Ամփոփիչ (2024)	28.2%	9.7%	4.3%	55.0%
	Ելակետային (2021)	13.5%	6.7%	9.4%	69.3%
Ես ավելի շատ գրքեր եմ կարդում պլանշետից, համակարգչից, քան՝ տպագիր	Ամփոփիչ (2024)	16.8%	10.4%	7.5%	59.3%
	Ելակետային (2021)	14.2%	12.7%	7.5%	61.3%

0% 10% 20% 30% 40% 50% 60% 70% 80% 90% 100%


■ Այո ■ Հիմնականում այո ■ Հիմնականում ոչ ■ Ոչ ■ Դժ պ

Գծապատկեր 38. Ասա՛, խնդրեմ, Դու սովորաբար կատարում ես հետևյալ գործողությունները (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասաների հետ (2024): «Այո» պատասխանները տարանջատված ըստ բնակավայրի տեսակի.




■ Քաղաքային ■ Գյուղական

Գծապատկեր 39. Ասա՛, խնդրեմ, Դու սովորաբար կատարում ես հետևյալ գործողությունները (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2024). Պատասխանները տարանջատված ըստ սեռի.



Գծապատկեր 40. Ասա՛, խնդրեմ, Դու սովորաբար կատարում ես հետևյալ գործողությունները (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2024): «Այո» պատասխանները տարբերակված ըստ ԿԱՊԿՈՒ և ԿԱՊԿ չունեցող հարցվողների .




56

Հարցվողների մեծամասնությունը պատասխանել է, որ պատրաստ է փոխել իր որոշ սովորությունները («Այո» կամ «Հիմնականում այո» պատասխաններ): Դեռահասներն ավելի հակված են փոխելու իրենց որոշ սովորությունները, քան մեծահասակները (մեծահասակների՝ 72%, դեռահասներ՝ 79.5%-ն է պատասխանել «Այո» և «Հիմնականում այո»): Այն դեռահասների մասնաբաժինը, ովքեր պատրաստ են փոխել իրենց որոշ սովորությունները քաղցրահամ

ջուրը խնայելու համար (ավելի կարճ ցնցուղ կամ լոգանք ընդունել, փակել ջրի ծորակը ատամները լվանալիս և այլն) փոքր-ինչ աճել է ելակետային հարցման համեմատ (76,3%-ից դառնալով 79,5%): «Այո» պատասխանած դեռահասների տոկոսը շատ չի փոխվել, բայց այն դեռահասների տոկոսը, ովքեր «Հիմնականում այո» են պատասխանել, ելակետային հետազոտության 30,5%-ից ամփոփիչում աճել է 35,0%-ի (տե՛ս Գծապատկեր 41):


Գծապատկեր 41. Պատրաստ եք փոխել Ձեր որոշ սովորությունները քաղցրահամ ջուրը խնայելու համար: Օրինակ՝ ավելի կարճ ցնցուղ կամ լոգանք ընդունել, փակել ջրի ծորակը ատամները լվանալիս և այլն (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024), (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).



Մեծահասակներին խնդրել են ցանկից ընտրել այն գործողությունները, որոնք իրենք իրականացրել են վերջին մեկ տարվա ընթացքում՝ բնական միջավայրը պաշտպանելու համար: Ելակետային և ամփոփիչ հետազոտության արդյունքները արձանագրել են նույնանման միտումներ: Մեծահասակները սովորաբար գնում են էկոլոգիապես մաքուր կամ օրգանական արտադրանք, էներգախնայող լամպեր, խնայում են ջուրը և օգտագործում ավելի քիչ փաթեթավորմամբ ապրանքներ: Այս գործողությունները սովորաբար պահանջում են ապրելակերպի նվազագույն փոփոխություններ և կարող են հեշտությամբ ինտեգրվել առօրյա կյանքում,

ինչը կարող է բացատրել դրանց իրականացման ավելի բարձր ցուցանիշը: Մինչդեռ, ամենահազվադեպ հանդիպողն են իրականացման համար ավելի բարդ վարքագծի ձևերը, ինչպիսիք են խոհանոցի, այգու և պարտեզի համար օրգանական թափոնների արկղի, էներգիան պահպանող շինանյութերի օգտագործումը և հեծանիվ վարելը (տե՛ս Գծապատկեր 42): Մեծահասակների շրջանում էկոլոգիապես բարենպաստ վարքագծի պարզ, քիչ ջանքեր պահանջող ձևերի առավել տարածվածությունը թույլ է տալիս ենթադրել, որ իրականացման դյուրինությունը զգալի դեր է խաղում այդպիսի վարքագծի նախընտրելիության գործում:


Գծապատկեր 42. Վերջին մեկ տարվա ընթացքում արդյո՞ք իրականացրել եք հետևյալ գործողություններից յուրաքանչյուրը՝ բնական միջավայրը պաշտպանելու համար (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).




Գծապատկերներ 43 և 44-ի տվյալները ցույց են տալիս, որ մեծահասակ հարցվողներն ավելի հաճախ են խոսում տանը ջուր և էներգիա խնայելու մասին, քան դեռահասները: Բացի այդ, դեռահասները հայտնել

են, որ ավելի հաճախ խոսում են ջուր, քան էներգիա խնայելու մասին: Այս միտումը ելակետային հարցումից մնացել է անփոփոխ (տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակներ 32 և 33):

Գծապատկեր 43. Որքա՞ն հաճախ եք խոսում Ձեր տանը էներգիա (հոսանք, գազ, վառելիք) խնայելու մասին: Որքա՞ն հաճախ եք խոսում Ձեր տանը ջուրը խնայելու մասին (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Գծապատկեր 44. Որքա՞ն հաճախ եք խոսում Ձեր տանը էներգիա (հոսանք, գազ, վառելիք) խնայելու մասին: Որքա՞ն հաճախ եք խոսում Ձեր տանը ջուրը խնայելու մասին (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).



Ինչպես ցույց է տրված Գծապատկեր 45-ում, հարցվողների մեծամասնությունը պատրաստ է միջոցներ ձեռնարկել՝ իրենց համայնքներում կլիմայի փոփոխության ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու համար: Փոքր-ինչ անց էլ այն դեռահասների մասնաբաժինը, ովքեր պատրաստ են միջոցներ ձեռնարկել իրենց համայնքում կլիմայի փոփոխության ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու համար՝ ելակետային հետազոտության 75,5%-ից ամփոփիչ հարցմանը դառնալով 77,8%: Սակայն, նվազել է պատրաստակամ մեծահասակների տոկոսը՝ ելակետայինի 75,7%-ից ամփոփիչ հարցմանը կազմելով 62,9% (տե՛ս Հավելված 1-ի Աղյուսակ 30):

Հարցվողների մեծ մասը պատրաստակամություն է հայտնել ապագայում մասնակցել բնապահպանական խնդիրներին ուղղված տարբեր գործողությունների

(մեծահասակների 62,9%-ը, դեռահասների՝ 77,8%): Դեռահասները դրսևորում են բնապահպանական գործողություններին մասնակցելու ավելի մեծ ոգևորություն, քան մեծահասակները: Դեռահասների մեծամասնությունը նշել է հարցաթերթում թվարկված իրազեկման և կամավորության բոլոր գործողությունները գրեթե նույն համամասնությամբ՝ ինչպես ելակետային, այնպես էլ ամփոփիչ հետազոտությունում: Այնուամենայնիվ, դպրոցում


Հետազոտական հարց 5.

Որքանո՞վ են նրանք ներկայումս ներգրավված և պատրաստ ակտիվորեն ներգրավվել բնապահպանական ծրագրերում և գործողություններում:


բանավեճերին մասնակցելու, ինչպես նաև համայնքային կամ դպրոցական բնապահպանական նախագծի մասնակից լինելու ցանկությունն ամփոփիչ հարցմանը աճել է (համապատասխանաբար՝ 5,5 և 4,9 տոկոսային կետով), ինչը կարող է լինել ծրագրի արդյունք: Դեռահաս հարցվողների շրջանում (42,6%) ամենաքիչն ընտրվել է «հրապարակում

անել, մեկնաբանել կամ տարածել սոցիալական ցանցերում» տարբերակը (տե՛ս Գծապատկեր 46): Իսկ մեծահասակ հարցվողների շրջանում ամենազվադեպ ընտրված գործողություններն են սոցիալական ցանցերում հրապարակում անելը, մեկնաբանելը կամ տարածելը (33,9%) և հանրային ելույթով հանդես գալը (19,7%) (տե՛ս Գծապատկեր 47):


Գծապատկեր 45. Ընդհանուր առմամբ պատրաստ եք քայլեր ձեռնարկել Ձեր համայնքում կլիմայի փոփոխության ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու համար (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024), (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).



Գծապատկեր 46. Ապագայում կցանկանա՞յի՞ր մասնակցել բնապահպանական խնդիրներին ուղղված հետևյալ գործողություններին (n=1,516). CAWI հետազոտություն դեռահասների հետ (2021; 2024).



Գծապատկեր 47. Ապագայում կցանկանալի՞ք մասնակցել բնապահպանական խնդիրներին ուղղված հետևյալ գործողություններին (n=710; n=703). CAPI հետազոտություն մեծահասակների հետ (2021; 2024).




Գծապատկեր 48-ը ցույց է տալիս, որ դեռահաս հարցվողների մեծամասնությունը ներգրավված է բնապահպանական տարբեր հարցերի վերաբերյալ իրենց ընտանիքի և համայնքի իրազեկվածության բարձրացման ուղղված գործողություններում՝ օրինակ, պատմում են ջուրը խնայելու (76,3%), դաշտերը, տերևները, անիվներն ու պլաստմասե իրերը չայրելու (72,4%), կլիմայի փոփոխության և դրա հետևանքների մասին, ինչպես նաև էներգիա ստանալու համար ավելի քիչ վառելանյութ օգտագործելու մասին (58,7%): Բացի դա, աշակերտների 61,9%-ը մասնակցում է կամավոր ծառատունկի: Յուրաքանչյուր երկրորդ աշակերտ մասնակցում է բնապահպանական խնդիրների շուրջ դպրոցական բանավեճի կամ քննարկման: Իսկ գրեթե յուրաքանչյուր երրորդ աշակերտ մասնակցում է իր համայնքի կամ դպրոցի բնապահպանական նախագծերին: Դեռահասների շրջանում ամենաքիչ ընտրված գործողությունը սոցիալական ցանցերում հրապարակում անելը, մեկնաբանելը կամ տարածելն է (19,9%), ինչը ենթադրում է, որ բնապահպանական ակտիվիզմի դեպքում ուղիղ ու շոշափելի գործողություններն ավելի գրավիչ կամ հասանելի են նրանց համար, քան թվային միջավայրում ակտիվությունը:


Ամփոփիչ հետազոտությունում, բնապահպանական խնդիրներին ուղղված գործողություններում ներգրավվածության մասին մեծահասակ հարցվողների մեծամասնությունը հայտնել է, որ նրանք իրազեկել

են իրենց ընտանիքի և համայնքի անդամներին ջուրը խնայելու (80,9%), դաշտերի, արտերի, անիվների և պլաստմասե իրերն այրելու հետևանքով առաջացած վնասների մասին (67,4%), ինչպես նաև մասնակցել են կամավոր ծառատունկի և այլ նմանատիպ գործողությունների (57,6%): Այս ցուցանիշները ելակետային հետազոտության արդյունքների համեմատ փոքր-ինչ նվազել են: Մեծահասակների շրջանում ամենաքիչ հանդիպող գործողություններն են բնապահպանական հարցերով համայնքի ավագանու անդամի հետ կապ հաստատելը (14,8%), սոցիալական ցանցերում հրապարակում անելը, մեկնաբանելը կամ տարածելը (11,2%), համայնքային իշխանությունների ժողովին կամ հանրային քննարկմանը (10,1%), համայնքային բնապահպանական նախագծին (8,1%) և ազգային մակարդակի հանրային քննարկումներին մասնակցելը (7,7%), հանրային ելույթով հանդես գալն (4,0%) ու ստորագրահավաքի մասնակցելը (9,5%): Վերջին տարբերակը ամփոփիչ հետազոտությունում ավելացվել է հարցվողների կողմից՝ որպես պատասխանի այլ տարբերակ (տե՛ս Գծապատկեր 49): Այս տվյալները վկայում են, որ ի տարբերություն դեռահասների, մեծահասակներն ավելի շատ ներգրավված են իրենց ընտանիքին և համայնքին ուղղված պասիվ գործողություններում, այլ ոչ ուղիղ գործողություններին, ինչպիսիք են շահապաշտպանությունը կամ ստորագրահավաքները:

Գծապատկեր 48. Դու երբևէ իրականացրե՞լ ես հետևյալ գործողություններից որևէ մեկը բնապահպանական խնդիրների համար (n=1,516). CAWI հետազոտություն ռեռահասանների հետ (2024).



Գծապատկեր 49. Դուք երբևէ իրականացրե՞լ եք հետևյալ գործողություններից որևէ մեկը բնապահպանական խնդիրների համար (n=710; n=703). CAPI հետազոտություն ղեռահասանների հետ (2021; 2024)



4. Հիմնական արդյունքներ. Ֆոկուս խմբային քննարկումներ

Ծրագրի շահառու խմբերի հետ իրականացվել են 15 ՖԽՔ-ներ՝ Ծրագրից քաղված դասերն ու լավագույն փորձը արձանագրելու, ինչպես նաև դրա ուժեղ և թույլ կողմերը հասկանալու համար որակական տվյալներ հավաքագրելու միջոցով:

Լավագույն փորձ, Լռոի և Տավուշ

Արևածագ գյուղում աշակերտները բարձրաձայնել են անտառահատման խնդիրը՝ **ուսումնասիրելով թեման, ստեղծելով կոմիքսների գիրք, նախագծելով իրենց դպրոցի դիմաց այգու 3D մոդել և հորինելով հեքիաթ՝** անտառահատումների վնասակար հետևանքներն ընդգծելու համար:

Վանաձոր քաղաքում աշակերտները մասնակցել են աղբի տեսակավորման նախագծին՝ **նկարահանելով ընթացքը և ստեղծելով ուսուցողական տեսանյութեր:**

Այրում համայնքում աշակերտները պայքարել են շրջակա միջավայրի աղտոտման դեմ՝ **իրականացնելով հետազոտություններ, հարցումներ անցկացնելով տեղի բնակիչների և համայնքապետարանի աշխատակիցների հետ, ինչպես նաև խթանելով կայուն վարքագիծ՝ էկո պայուսակների արտադրության և վաճառքի միջոցով:**

Բերդ քաղաքում աշակերտները քննարկել են անտառահատումների խնդիրը՝ **հարցումներ անցկացնելով անտառային տնտեսության մասնագետների հետ, ստեղծելով Տավուշի անտառահատումների դետալային պաստառ, տնկելով ծառեր Դեռնդրոպարկում և պատրաստելով տեղեկատվական բուկլետներ՝ անտառահատումների ազդեցության և անտառների վերականգնման էֆեկտների մասին:**

Տավուշ գյուղում աշակերտները կենտրոնացել են աղբահանության խնդրի վրա՝ **ստեղծելով տեղեկատվական պաստառներ, անցկացնելով հարցումներ, նկարահանելով տեսանյութեր և մասնակցելով վերամշակման միջոցառումներին:**

Առանձնացվել են դեռահասների երկու խմբեր. մեկը բաղկացած էր նախագծային ուսուցման և համայնքային արշավների ու միջոցառումների մասնակիցներից, իսկ մյուսը՝ միայն կլիմայի փոփոխության վերաբերյալ պարտադիր դասերին մասնակցած դեռահասներից: Հետաքրքիր է, որ երկու խմբերն էլ քաջատեղյակ էին

ՖԽՔ մասնակիցների մեջբերումները. Համայնքում նախագծային ուսուցման վրա հիմնված վարքագիծն ու փոփոխությունները.

«Մեր դպրոցում կույրերի համար ձեռնափայտեր էին պատրաստել պլաստիկ շշերից, և, հենց որ դրանք դիպչում էին պատին կամ ինչ-որ այլ տեղ՝ ազդանշան էին տալիս» (աշակերտ, արական, 16տ, Գեղարքունիք):

«Այժմ, Գորիսում պլաստիկը տեսակավորվում է: Պլաստիկի համար կան առանձին աղբամաններ, որտեղ այն տեսակավորվում է և երկրորդ կյանք ստանում» (ուսուցիչ, Սյունիք):

«Ծրագրի հաջողության գրավականը պատշաճ վերապատրաստումներն էին: Ես մասնակցել եմ բազմաթիվ վերապատրաստումների, բայց կարող եմ մատներիս վրա հաշվել նրանք, որոնք իսկապես արդյունավետ են եղել, գիտելիք տվել ուսուցչին և մոտիվացրել՝ աշխատանքը կատարելու համար» (ուսուցիչ, Լռոի):

Համայնքում՝ իրենց հասակակիցների կազմակերպած նախագծային միջոցառումներին և հիմնականում հավանություն էին տալիս դրանց:

Ինչպես վկայում են ՖԽՔ արդյունքները, դեռահասները կարծում են, որ ընդլայնել են իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ շրջակա միջավայրին հասցված վնասը կանխելուն և/կամ մեղմելուն ուղղված գործողությունների վերաբերյալ՝ հատկապես աղբի վերամշակման և վերօգտագործման հետ կապված: ՖԽՔ մասնակիցները նշում են, որ Ծրագրի շնորհիվ ձեռք են բերել փափուկ հմտություններ: Մասնավորապես, կլիմայի փոփոխության խնդիրները տարբեր լրատվամիջոցներով լուսաբանելու համար դեռահասները սովորել են արդյունավետորեն օգտագործել այնպիսի հաղորդակցության միջոցներ, ինչպիսիք են տեսանյութերը, հանրային միջոցառումները և սոցիալական և թվային մեդիայի տարբեր տեսակները: Դեռահասները ձեռք են բերել փաստահեն հետազոտություններ իրականացնելու հմտություններ՝ հավաքագրելով տարբեր կարծիքներ:

ՖԽՔ ընթացքում ուսուցիչները հայտնել են, որ հիմնականում գոհ են իրենց վերապատրաստումներից, և որպես արդյունք փորձարկել և իրականացրել են նախագծային ուսուցման իրենց սեփական մոտեցումներն ու ներառել դրանք ուսումնական ծրագրերում: Ուսուցիչները նշել են, որ

Լավագույն փորձ, Սյունիք և Վայոց Ձոր .

Վայք համայնքում աշակերտները բարձրացրել են տերևների այրման բացասական հետևանքների մասին իրազեկվածությունը՝ ստեղծելով «Տերևների այրման ազդեցությունը մարդու շնչառության վրա» վերնագրով տեսանյութ, որը տարածվել է Վայքի քաղաքապետարանի կայքէջում: Նրանք առաջարկել են տերևներից կոմպոստ պատրաստել, ինչը հավանության է արժանացել բնակիչների կողմից, և արդյունքում քաղաքապետարանը տրամադրել է փորող մեքենաներ, իսկ դպրոցները՝ կոմպոստացման համար տարածքներ:

Պլաստիկի այրման և վերամշակման Նախագծի շրջանակներում, աշակերտներն իրականացրել են տեղեկատվական արշավ, ուսումնասիրել պլաստիկի վնասակար ազդեցությունը, հավաքել և վերամշակել պլաստիկ շշեր: Որպես Նախագծի արդյունք ստացել են ֆինանսավորում՝ իրենց դպրոցի համար երկու աղբաման գնելու համար:

Վերապատրաստումները հատկապես արդյունավետ են եղել ԿԱՊԿՈՒ աշակերտներին ներգրավելու տեսանկյունից: Ուսուցիչները հատուկ ջանքեր են գործադրել դպրոցի նախագծային աշխատանքներում նրանց ներգրավելու և ընդհանուր ներառականություն ապահովելու համար: ՖԽՔ մասնակից ուսուցիչները նշել են, որ սովորել են հաշվի առնել և հարգել աշակերտների հատուկ կարիքները և ընտրել համապատասխան առաջադրանքներ ԿԱՊԿՈՒ երեխաների համար:

ՖԽՔ մասնակիցների մեծ մասն ընդգծում է, որ դպրոցի նախագծային աշխատանքները լայնորեն տարածվել են համայնքներում, և բնապահպանական խնդիրների վրա հրավիրել ինչպես բնակիչների, այնպես էլ համայնքային իշխանությունների ուշադրությունը: Ուսուցիչների, աշակերտների և համայնքային իշխանությունների միջև եռակողմ համագործակցությունը շատ արդյունավետ է եղել և բերել է շոշափելի փոփոխություններ: ՖԽՔ-երի որոշ մասնակիցներ նկատել են իրենց համայնքներում բնակչության վարքագծի իրական փոփոխություններ: Դեռահասները որդեգրել են շրջակա միջավայրի նկատմամբ ավելի պատասխանատու վարքագիծ՝ ցուցաբերելով այն չաղտոտելու պարտավորություն: Ինչպես վկայում են ՖԽՔ մասնակիցները, Ծրագիրը նպաստել է թիմային աշխատանքի և համագործակցային հմտությունների զարգացմանը՝ ոչ միայն դեռահասների, այլև մեծահասակների շրջանում խմբային միջոցառումներին մասնակցելու շնորհիվ:

Այն համայնքներում, որտեղ Ծրագիրը ներառել է բնապահպանական միջոցառումներ, ինչպիսիք են

ծառատունկը կամ տարածքի մաքրումը, մասնակից դեռահասներն ավելի բարձր գոհունակություն են հայտնել՝ համեմատ այն համայնքների, որտեղ կազմակերպվել են միայն կրթական և իրազեկման միջոցառումներ: Ըստ ՖԽՔ արդյունքների՝ Ծրագիրն ուներ միջառարկայական բնույթ ու միավորել է բազմաթիվ առարկաների (օրինակ՝ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա և այլն) հասկացություններ և ներգրավել տարբեր ուսուցիչների՝ ապահովելով նրանց համագործակցությունն ու թիմային աշխատանքը:

ՖԽՔ մասնակիցների մեջբերումները, Համայնքում Նախագծային ուսուցումն ու գենդերային տարբերությունները .

«Գյուղական բնակավայրերի տղաները տան հոգս ունեն, դրա համար էլ ավելի քիչ էին մասնակցում, քան աղջիկները: Նրանք ժամանակ չունեն» (ուսուցիչ, Գեղարքունիք):

«Ինչ-որ անհայտ օրինաչափության համաձայն, հիմնականում տղաները դաս չեն սովորում, հատկապես, երբ տարիքը մի փոքր ավելի բարձր է, և ծնողների ազդեցությունը երեխայի վրա թուլանում է» (ուսուցիչ, Լոռի):

Համայնքի և դպրոցների ղեկավարության հետ ՖԽՔ արդյունքների համաձայն՝ Ծրագիրը նպաստել է համայնքում երիտասարդների ակտիվությանը և որոշումների կայացման գործընթացներում նրանց ներգրավվածության բարձրացմանը: Դեռահասները ոչ միայն ընդլայնել են իրենց բնապահպանական գիտելիքներն ու հմտությունները, այլև ակտիվորեն մասնակցել են համայնքներում նման վարքագծի խթանմանը: Ո՛չ դեռահասները, և ո՛չ համայնքային իշխանությունները միմյանց հետ համագործակցության փորձ չեն ունեցել: Մեծահասակները՝ ներառյալ դպրոցի տնօրենները, ուղղակիորեն ներգրավված չեն եղել Ծրագրի աշխատանքներում, ինչը հիասթափեցրել է դեռահասներին: Ոչ բոլոր համայնքային իշխանություններն են աջակցել դեռահասների դպրոցական Նախագծերին ու բնապահպանական ակտիվությանը: Ավելին, որոշ համայնքներում համայնքային իշխանությունները բավական անտարբեր են եղել: Գյուղական բնակավայրերում համայնքային իշխանությունների հետ համագործակցությունն ավելի հեշտ է ստացվել, քան քաղաքներում: ՖԽՔ արդյունքները ցույց են տալիս, որ այն համայնքներում, որտեղ հանքարդյունաբերությունը տեղի բնակչության համար եկամտի հիմնական աղբյուրն է, Ծրագիրը բախվել է դիմադրության՝ ինչպես ընտանիքների, այնպես էլ ղեկավարության կողմից: Ծրագրային

ՖԽՔ մասնակիցների մեքբերումները. խոչընդոտներ.

«Ինչքան էլ մաքրեցինք, միևնույն է, համայնքը դեռ աղտոտված է» (աշակերտ, արական, 16տ., Գեղարքունիք):

«Մենք հույս ունեինք, որ աղբատար մեքենան շաբաթը մի քանի անգամ կգա գյուղ: Սակայն, ոչինչ չփոխվեց» (աշակերտ, իգական, 18տ., Գեղարքունիք):

«Մենք ուզում էինք ցայտաղբյուր տեղադրել մեր դպրոցի դիմաց, դիմեցինք համայնքապետարան, բայց մեր խնդրանքն այդպես էլ իրականություն չդարձավ» (աշակերտ, իգական, 17տ., Տավուշ):

որոշ առաջարկներ մնացել են միայն թղթի վրա, չեն ստացել ֆինանսավորում և աջակցություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչը հանգեցրել է աշակերտների հիասթափությանը:

Այնուամենայնիվ, ՖԽՔ արդյունքները ցույց են տալիս, որ համայնքի բնակիչներն ունեն բացասական վերաբերմունք և կարծրատիպեր՝ այլ մարդկանց կողմից աղտոտված տարածքները մաքրելու հետ կապված: Հիմնականում, պիտակավորում են այն մարդկանց, ովքեր մաքրում են ուրիշների աղտոտածը, այդ պատճառով էլ որոշ դեռահասներ խուսափում են մասնակցել թափոնների կառավարման նախագծերին և գործողություններին: Մշակութային համատեքստը պայմանավորում նաև գենդերային տարբերությունների առկայությունը, քանի որ հատկապես տղաներն անհարմար են զգում մաքրել կամ խոսել մաքրության մասին՝ համարելով, որ իրենց գաղափարները լուրջ չեն ընդունվի: Օրինակ, տղաները կարծում են, որ աղբահանությունը «պատվաբեր» գործողություն չէ, իսկ դրանով զբաղվելը կարող է հանգեցնել ծաղրի:

Միևնույն ժամանակ, ՖԽՔ-ների մասնակիցները հայտնել են, որ աղջիկներն ավելի ակտիվ են ներգրավվել ծրագրին, քան տղաները: Տղաները աշխատել են խմբերում՝ կատարելով որոշ առաջադրանքներ, բայց խուսափել են հրապարակային ելույթներից կամ կատարած աշխատանքը ներկայացնելուց: Ծրագրում տղաների անբավարար ներկայացվածության մեկ այլ պատճառն այն է, որ գյուղական համայնքներում տղաները սովորաբար աշխատում են գյուղատնտեսության ոլորտում կամ կատարում այլ աշխատանք: Նույն պատճառով էլ տղաներն ավելի հավանական է, որ դուրս մնան դպրոցից և բաց թողնեն դասերը:

Լավագույն փորձ, Շիրակ.

Լուսաղբյուր գյուղի դպրոցական նախագիծն անդրադարձել էր աղտոտմանն ու աղբահանությանը՝ բարձրացնելով իրազեկվածությունը վիզուալ նյութերի (իրավիճակը ցուցադրող լուսանկարներ և տեսանյութեր) միջոցով, ինչպես նաև աղբամանների տեղադրման վերաբերյալ տեղի բնակչության հետ հարցում անցկացնելով: Սա տվել է շոշափելի արդյունքներ, ինչպիսիք են աղբամանների համատարած տեղադրումը (մեկական՝ յուրաքանչյուր փողոցի ամեն երեք տան համար) և կազմակերպված աղբահանություն՝ համայնքային իշխանությունների աջակցությամբ:

Կապս գյուղում աշակերտները մասնակցել են թղթի վերամշակման մրցույթին՝ պատրաստելով նոթատետրեր ու ընթացքը տեղադրելով դպրոցի կայքէջում: Այժմ, դպրոցն իր գրադարանում ունի այդ թեմայով գրքույկ, ինչպես նաև թղթի վերամշակման կոնստրուկցիաներ՝ տեղադրված Կենտրոնական Շիրակ ՏԱԽ-ի օգնությամբ:

Մարալիկ համայնքում «Առողջ Սնունդ - Առողջ Սերունդ» վերնագրով դպրոցական նախագիծը վարքագծի փոփոխության միջոցով նպաստել է կլիմայի փոփոխության մեղմացման վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Աշակերտները համայնքին կրթել են քիմիական պարարտանյութերի բացասական ազդեցության վերաբերյալ և խթանել կոմպոստների օգտագործումը՝ տեղի բնակիչներին բաժանելով իրենց կողմից պատրաստված կոմպոստի շշեր՝ դրանց պատրաստման եղանակը վրան փակցված: Բացի դա, պատրաստել են տեղեկատվական գրքույկներ՝ հիմնված աղբի այրման վնասակար հետևանքների վերաբերյալ իրենց սեփական հետազոտության վրա: Ավելին, նրանք հանդիպումներ են ունեցել գյուղատնտեսության բաժնի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու համար թունաքիմիկատներին առնչվող կարգավորումներին հետևելու անհրաժեշտությունը: Նախագիծը ճանաչում է ստացել համայնքում, տեղադրվել սոցիալական ցանցերում, իսկ համայնքում աշակերտները նաև տեղադրել են QR կոդերով վահանակներ՝ աղբի պատշաճ հեռացման վերաբերյալ, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումները պատկերող պաստառներ:

Ծրագրի հիմնական արդյունքները և ուժեղ կողմերն ամփոփված և ներկայացված են ստորև.

Գիտելիքի և հմտությունների ձեռքբերում.

դեռահասները զգալիորեն բարելավել են շրջակա միջավայրի վնասը կանխելուն և մեղմելուն ուղղված

գործողությունների մասին իրենց գիտելիքները՝ հատկապես թափոնների վերամշակման և վերաօգտագործման վերաբերյալ:

Նախագծային ուսուցման տարածում. ուսուցիչներն իրենց ուսումնական ծրագրերում հաջողությամբ փորձարկել և ներառել են նախագծային ուսուցումը՝ ծրագրի իրականացումից առաջ անցնելով համապատասխան վերապատրաստումներ:

Համայնքի ներգրավվածություն. դպրոցական նախագծերը նպաստել են համայնքում տեղեկատվության տարածմանը, իրազեկվածության բարձրացմանը և բնապահպանական հարցերի շուրջ ավելի լայն համայնքային գործողությունների խթանմանը:

Լավագույն փորձ, Գեղարքունիք.

Աղբահանությանը նվիրված իրենց նախագծային աշխատանքի շրջանակներում աշակերտները կլիմայի փոփոխության վերաբերյալ հարցում են անցկացրել ոլորտի ներկայացուցիչների և համայնքի բնակիչների շրջանում: Նրանք պատրաստել և տարածել են տեղեկատվական գրքույկներ, կազմակերպել աղբի վերամշակման միջոցառումներ, իրականացրել թափոններից պատրաստված իրերի ցուցահանդես-վաճառք, պատրաստել էկո (կտորե) պայուսակներ և ցուցադրել կլիմայի փոփոխության վերաբերյալ տիկնիկային ներկայացում՝ տարրական դասարանների աշակերտների համար:

Վարքագծի փոփոխություններ. ՖԻՔ մասնակիցները նկատել են համայնքի անդամների մոտ բնապահպանական պատասխանատվության ուղղությամբ վարքագծի դրական փոփոխություններ: Դեռահասները որդեգրել են ավելի պատասխանատու վարքագիծ՝ ցուցաբերելով շրջակա միջավայրը աղտոտելուց խուսափելու պարտավորություն:

Ակտիվ նախագծերից գոհունակության բարձր մակարդակ. ավելի արդյունավետ և կայուն էին այն նախագծերը, որոնք ներառում էին ոչ միայն կրթական և իրազեկման բաղադրիչներ, այլև ուղիղ բնապահպանական գործողություններ (ինչպիսիք են ծառատունկը և շաբաթօրյակները):

ԿԱՊԿՈՒ աշակերտների ներառում. Ծրագրի ողջ ընթացքում ԿԱՊԿՈՒ երեխաների ներառման պարտադիր պայմանը հնարավորություն է տվել առաջադրանքները հարմարեցնել նրանց

հատուկ կարիքներին՝ բարելավելով ուսուցիչների հմտությունները:

Փափուկ հմտությունների զարգացում. դեռահասները զարգացրել են անհրաժեշտ փափուկ հմտություններ, այդ թվում՝ արդյունավետ հաղորդակցման, աշխատանքները ներկայացնելու, թիմային աշխատանքի և խմբային աշխատանքներում համագործակցության կարողությունները:

ՖԻՔ մասնակիցների մեջբերումները. առաջարկություններ.

«Ես կցանկանայի, որ երեխաները հավաստագրեր ստանային համայնքից, քանի որ իմ աշակերտներից երկուսը պատրաստվում են սովորել Ամերիկյան Համալսարանում, որտեղ նման նախագծերին մասնակությանը մեծ նշանակություն է տրվում» (ուսուցիչ, Սյունիք):

«Համայնքային նախագծերի մշակման փուլում բյուջեի հաշվարկները բավականաչափ լավ չէին կատարվել: Եվ միայն համայնքապետարանի ֆինանսական աջակցության շնորհիվ է, որ նախագծերը հաջողել են» (համայնքապետարանի ներկայացուցիչ, Լոռի):

«Ծրագիրը պետք է ավելի երկար տևեր՝ կայուն ազդեցություն ունենալու համար» (աշակերտ, արական, 18տ., Շիրակ):

Երիտասարդների ակտիվություն և ներգրավվածություն համայնքային որոշումների կայացման գործում. տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային իշխանությունների հետ քննարկումներում ներգրավվածությունը երիտասարդներին հնարավորություն է տվել բարձրաձայնելու իրենց մտահոգությունները և նպաստելու համայնքային ռազմավարությունների մշակմանը՝ ընդգծելով երիտասարդների մասնակցության կարևորությունն իրենց համայնքներում կայուն փոփոխությունների հասնելու գործում:

Ծրագրի թերացումներն ու թույլ կողմերն ամփոփված ու ներկայացված են ստորև.

Արական սեռի դեռահասների մասնակցությունը խթանելու դժվարություններ. աղտոտված տարածքների մաքրման, ինչպես նաև ընդհանրապես երիտասարդ ակտիվիստ լինելու վերաբերյալ գենդերային կարծրատիպերն ու մտահոգությունները խոչընդոտում են տղաների մասնակցությանը: Ծրագրում հատուկ միջոցառումներ նախատեսված չեն եղել հենց տղաներին մոտիվացնելու համար:



Ֆինանսավորման խնդիրների պատճառով կայունության բացակայություն և

հիասթափություն. այն նախագծերը, որոնք տեղական ինքնակառավարման մարմիններից ֆինանսավորում և աջակցություն չեն ստացել, կայուն չէին, ինչն էլ աշակերտների շրջանում հիասթափության պատճառ է դարձել: Ծրագիրը չէր սահմանել միջոցներ՝ այլընտրանքային ֆինանսավորման հայթայթման կամ ֆինանսավորման խնդիրների պատճառով առաջացած հիասթափությունը հաղթահարելու համար: Արդյունքում, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աջակցություն չստացած նախաձեռնությունները հանգեցրին աշակերտների մոտ Ծրագրից հիասթափության առաջացման:

Ժամանակի կառավարման

խնդիրներ. ուսուցիչները, աշակերտները և

համայնքապետարանի ներկայացուցիչները նշեցին Ծրագրի ընթացքում ժամանակի կառավարման խնդիրները՝ շեշտելով հետևյալ կետերը. 1) հայտերի ընդունման վերջնաժամկետները և նախագծերի իրականացման ժամկետները շատ սեղմ էին, 2) որոշ ուսուցիչներ և աշակերտներ չեն կարողացել տեղավորվել ժամկետների մեջ, 3) ծրագրի տևողությունը բավարար չէր կայուն արդյունք ապահովելու համար: Այնուամենայնիվ, Հայաստանում առաջացած արտակարգ իրավիճակն ու փախստականներին ուղղված ջանքերը արդարացնում են նման խնդիրների անխուսափելիությունը:

Համայնքային իշխանությունների հետ համագործակցության փորձի բացակայություն.

ինչպես դեռահասները, այնպես էլ համայնքային իշխանությունները համատեղ աշխատանքի սահմանափակ փորձ ունեին, ինչը դժվարացնում էր համագործակցությունը: Նրանք վստահության պակաս ունեին համագործակցություն հաստատելու հարցում և կարիք ունեին ավելի կոնկրետ ուղղորդման, թե ինչպես ներգրավել երիտասարդներին որոշումների կայացման գործընթացներում:

5. Եզրակացություններ

5.1. Հետազոտական հարցերը

Հետազոտական հարց 1.

Ելակետային ուսումնասիրության համեմատ որքանով է փոխվել թիրախային խմբերի գիտելիքը կլիմայի փոփոխության հայեցակարգի և այն գործողությունների մասին, որոնք նրանք կարող են ձեռնարկել շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վրա ազդեցությունը նվազեցնելու համար:

Կլիմայի փոփոխության եզրույթի վերաբերյալ թիրախային խմբերի տեղեկացվածության մակարդակը որոշ չափով բարելավվել է, որին զուգահեռ զգալի աճել է իրազեկվածությունը դրա պատճառների և հետևանքների մասին, իսկ դեռահասների շրջանում նաև կլիմայի փոփոխության մարդածին պատճառների վերաբերյալ: Սակայն, կլիմայի փոփոխության մեղմացման և դրանից պաշտպանվելու քայլերի վերաբերյալ գիտելիք ձեռք բերելու առաջընթացը համեմատաբար դանդաղ է: Ծրագրային համայնքներում ուսուցիչները որոշ չափով փակել են այդ գործնական գիտելիքի հաղորդման նկատելի բացը, բայց, դեռ աշխատանք պետք է տարվի սխալ պատկերացումները շտկելու ուղղությամբ:

Գրեթե բոլոր դեռահասները և մեծահասակների մեծամասնությունը ծանոթ էին «կլիմայի փոփոխություն» եզրույթին՝ Ծրագրից և՛ առաջ, և՛ հետո, ինչը վկայում է հետևողական լայնածավալ իրազեկման մասին: Կա ուժեղ կոռելյացիա մեծահասակների կրթական մակարդակի և կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկացվածության միջև, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև՝ հստակ տարբերություն: Քաղաքային բնակավայրերում ավելի շատ մեծահասակներ են ծանոթ այդ եզրույթին: Փոքր-ինչ բարելավվել է տեղեկացվածության մակարդակը 18-30 տարեկան հարցվողների շրջանում:

Համեմատելով ելակետային և ամփոփիչ հետազոտությունների արդյունքները, կարելի է եզրակացնել, որ աճել է իրազեկվածությունը կլիմայի փոփոխության պատճառների, հնարավոր հետևանքների և մեղմացման ռազմավարությունների վերաբերյալ: Սակայն, կլիմայի փոփոխությունից պաշտպանվելու և ընտանիքին պաշտպանելու հարցի հետ կապված իրազեկվածության աճը բավական համեստ է:

Ելակետային հետազոտությունում, դեռահաս հարցվողների մեծամասնությունը հայտնել է, որ ուսուցիչները շատ են խոսել իրենց հետ այն մասին, թե որոնք են կլիմայի փոփոխության պատճառներն ու հնարավոր հետևանքները, սակայն մեղմացման

ռազմավարությունների մասին՝ ավելի քիչ են խոսել: Ամփոփիչ հետազոտությունում, մեղմացման միջոցառումների վերաբերյալ կրթելու ջանքերն ակներև են դառնում, ինչը փաստվում է այն դեռահասների մասնաբաժնի աճով, որոնք հայտնում են, որ ուսուցիչներն իրենց հետ քննարկել են, թե ինչ կարելի է անել կլիմայի փոփոխությունը նվազեցնելու համար:

Դեռահասների և մեծահասակների գիտելիքներն ու պատկերացումները կլիմայի փոփոխության հիմնական հետևանքների վերաբերյալ նշանակալի փոփոխություններ չեն կրել: Ընդհանուր առմամբ, մեծահասակներն ավելի բարձր իրազեկվածություն են ցուցաբերել կլիմայի փոփոխության հետևանքների մասին, քան դեռահասները:

Տվյալները վկայում են, որ հարցվողները սկսել են ավելի լավ հասկանալ կլիմայի փոփոխության մարդածին բնույթը: Արական սեռի և բարձրագույն կրթություն ունեցող մեծահասակ հարցվողները ավելի հաճախ են ճիշտ նշում մարդկային գործոնը, որպես կլիմայի փոփոխության պատճառ՝ համեմատած իգական սեռի և միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող հարցվողների հետ:

Ընդհանուր առմամբ, կլիմայի փոփոխությունը համարվում է կարևոր խնդիր՝ առանց հարցվողների ժողովրդագրական խմբերի ընկալումների միջև նշանակալի տարբերությունների:

Հետազոտական հարց 2.

Ելակետային և ամփոփիչ հետազոտությունների միջև կա՞ն արդյոք տարբերություններ՝ աշխարհում, Հայաստանում և համայնքների մակարդակում թիրախային խմբերի ընկալմամբ կլիմայի փոփոխության հիմնական խնդիրների վերաբերյալ, և ինչպե՞ս է փոխվել այդ խնդիրների նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը:

Ամփոփիչ հետազոտությունում՝ ելակետային հարցման համեմատ փոխվել են թիրախային խմբերի կողմից նշված կլիմայի փոփոխության հիմնական խնդիրները, որտեղ մեծահասակները Հայաստանի պարագայում իրենց ուշադրությունը անտառահատումից և երաշտից տեղափոխել են ջրի, օդի աղտոտվածության և աղբահանության խնդիրներին, իսկ ամբողջ աշխարհի մակարդակով արտանետված թունավոր գազերն են դարձել գլխավոր մտահոգությունը: Ընդհանուր վերաբերմունքը վկայում է բնապահպանական խնդիրների վերաբերյալ իրազեկվածության և մտահոգության աճի մասին՝ դեռահասների կողմից կլիմայի փոփոխության դեմ գործողությունների կարևորության գիտակցման նկատելի աճով, միևնույն

ժամանակ՝ համայնքին առնչվող բնապահպանական մտահոգությունները նվազել են: Մեծահասակների մտահոգությունները պահպանվել են նաև ամփոփիչ հետազոտությունում, սակայն, վերջինում նրանք ավելի մեծ վստահություն են դրսևորել՝ շրջակա միջավայրի պաշտպանության գործում երիտասարդների դերի վերաբերյալ:

Ելակետային հետազոտությունում Հայաստանում բնապահպանական խնդիրներին ավելի ցածր նշանակություն էր տրվել՝ համեմատած այլ սոցիալ-տնտեսական և անվտանգության խնդիրների հետ: Իսկ ամփոփիչ հարցմանը բարձրացել է բնապահպանական խնդիրների կարևորությունը՝ դառնալով երկրորդ կարևորագույն խնդիրը Հայաստանի համար: Իզակյան սեռի դեռահասներն ավելի շատ են մտահոգված կլիմայի փոփոխությամբ իրենց համայնքներում, Հայաստանում և աշխարհում: Դեռահասների շրջանում ամենացածր մտահոգություն ցուցաբերած տարիքային խումբը 15-16 տարեկաններն են:

Դեռահասների շրջանում նվազել է ջուրը խնայելու կարևորության գիտակցումը և այն համոզմունքը, որ իրենց համայնքների երիտասարդներն ու դեռահասները կարող են փոփոխություններ բերել շրջակա միջավայրի պահպանության գործում:

Հարցվողները հիմնականում կարծում են, որ շրջակա միջավայրի պաշտպանության ջանքերը պետք է առաջնորդի ՀՀ կառավարությունը, իսկ հաջորդիվ՝ բնապահպանական կազմակերպությունները և ակտիվիստները: Մեծացել է կլիմայի փոփոխության դեմ պայքարում տարբեր դերակատարների դերի գիտակցումը, չնայած, որ բիզնեսի և խոշոր ընկերությունների ազդեցությունը դեռ թերագնահատվում է: Դեռահասների և մեծահասակների շրջանում առկա է անհամապատասխանություն իրենց և դեռահասների/երիտասարդների՝ որպես շրջակա միջավայրի փոփոխության դերակատարներ գնահատման հարցում, ինչն ընդգծում է տարբեր տարիքային խմբերում դերերի ընկալման հնարավոր տարբերությունները:

Դեռահասները, թեև մտահոգված են ապագայի հարցում, բայց ավելի քիչ են բացասական հույզեր ունենում: Հարցվողների մեծամասնությունը նշել է, որ բարկացել է այն պատճառով, որ բավարար բան չի արվում Կլիմայի փոփոխության հետ կապված, և հետաքրքրություն է հայտնել ավելին իմանալու այդ թեմայի շուրջ: Շատերը համոզվել են, որ իրենք կարող են նվազեցնել կլիմայի փոփոխության հետևանքները: Հարցվողների շատ քիչ տոկոսն է նյարդայնացել, որ կլիմայի փոփոխության նկատմամբ չափից շատ ուշադրություն է դարձվում:

Հետազոտական հարց 3.

Որքանո՞վ են փոխվել ամփոփիչ հետազոտությունում կլիմայի փոփոխության վերաբերյալ թիրախային խմբերի համար տեղեկատվության հիմնական աղբյուրները՝ ելակետային հարցման համեմատ:

Դեռահաս հարցվողների շրջանում կլիմայի փոփոխության մասին տեղեկատվություն ստանալու աղբյուրների նախասիրությունները զգալիորեն փոխվել են: Սկզբում, նրանք նախապատվությունը տալիս էին դպրոցի ուսուցիչներին, հեռուստատեսությանը և համացանցին: Ծրագիրը մեծացրել է աշակերտների կողմից կլիմայի փոփոխության վերաբերյալ նախագծային ուսուցման հանդես նախասիրությունն ու արժևորումը (ելակետայինի 16,3%-ից ամփոփիչում դառնալով 42,5%):

Մեծահասակները նախընտրում էին կլիմայի փոփոխության մասին տեղեկատվություն ստանալ հեռուստատեսության, համացանցի և սոցիալական ցանցերի միջոցով: Ամփոփիչ հետազոտությունում այս նախապատվությունը գրեթե չի փոխվել: Այնուամենայնիվ, հեռուստատեսության ընտրությունը մեծահասակների շրջանում ևս նվազել է:

Ելակետային հետազոտությունում, դեռահասների 69,5%-ը հայտնել է, որ հաճախել է կլիմայի փոփոխության վերաբերյալ դպրոցական դասընթացներին: Ամփոփիչ հարցմանը այս ցուցանիշն աճել է՝ կազմելով 73,1%-ի: Հաճախումների այս աճը զգալիորեն խթանել է իրազեկվածության և ընկալման մակարդակի աճն, ընդ որում, ամփոփիչ հետազոտությունում ավելի շատ դեռահասներ են հայտնել, որ լիովին հասկանում են՝ ինչ է կլիմայի փոփոխությունը:

Հետազոտական հարց 4.

Որքանո՞վ է աճել/նվազել թիրախային խմբերի պատրաստակամությունը՝ ստանալու կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև գիտելիքներ և հատուկ հմտություններ՝ դրա ազդեցությունները կանխելու, կառավարելու կամ նվազեցնելու համար:

Թե՛ ելակետային, թե՛ ամփոփիչ հետազոտություններում դեռահաս հարցվողների շուրջ 90%-ը պատրաստակամություն է հայտնել ավելին իմանալու կլիմայի փոփոխության մասին: Մեծահասակների շրջանում այս ցուցանիշն ավելի փոքր է՝ մոտ 70%:

Հետազոտական հարց 5.

Որքանո՞վ են նրանք ներկայումս ներգրավված և պատրաստ հետազայում ակտիվորեն ներգրավվել բնապահպանական ծրագրերում և գործողություններում:

Դեռահասներն ավելի մեծ ոգևորություն են ցուցաբերում բնապահպանական ծրագրերին ակտիվորեն մասնակցելու հարցում, քան մեծահասակները, ավելի հաճախ են մասնակցում դպրոցական բանավեճերին ու համայնքային բնապահպանական ծրագրերին, մինչդեռ մեծահասակները հակված են ներգրավվել ավելի պասիվ գործողություններում:

